Ազգ
Azg
22 ՄԱՐՏ 2013 ՈՒՐԲԱԹ 43(5126)
ISSN: 1829-1651

# Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ իսկական տարբերություն կա

**ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջանային «զբոսաշրջությունը» կրկնվող մոտիվներով շարունակվում է. նրանք կրկին տարածաշրջանում են: Երեկ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին, Ժակ Ֆորին, Յան Կելլիին, ինչպես նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին Երեւանում ընդունել է Հայաստանի արտգործնախարար նախարար Էդվարդ Նալբանդյանը:**



**Համանախագահները ներկայացրել են Ստեփանակերտում Լեռնային Ղարաբաղի ղեկավարության հետ իրենց հանդիպումները: Զրույցի ընթացքում մտքեր են փոխանակվել արցախյան հիմնախնդրի կարգավորմանն ուղղված քայլերի շուրջը:**

**Հիշեցնենք, որ դեռեւս նախօրեին Էդվարդ Նալբանդյանը որոշ մեկնաբանություն էր արել՝ պատասխանելով News.am լրատվական կայքի հարցին, թե «Ադրբեջանում ամենաբարձր մակարդակով շարունակում է հնչել, թե Հայաստանն է պատճառը, որ ղարաբաղյան հարցում պահպանվում է ստատուս քվոն, եւ որ Հայաստանն ու Ադրբեջանը չեն կարող մրցակից լինել, հետեւաբար Հայաստանը պետք է միակողմանի զիջումների գնա»:**

**«Առաջընթացի բացակայության եւ ստատուս քվոյի պահպանման միակ պատասխանատուն Ադրբեջանն է: Դրա մասին հայտնի է միջազգային հանրությանը, տեղյակ են եռանախագահները», շեշտել էր Նալբանդյանը: Նրա խոսքերով, եթե Ադրբեջանը իրոք շահագրգիռ է ստատուս քվոյի փոփոխմամբ, ապա վաղուց պետք է իր համաձայնությունը տված լիներ, այլ ոչ թե մերժեր վերջին տարիներին եռանախագահների ներկայացրած առաջարկությունները:**

**Հայաստանի արտգործնախարարը Հայաստանը եւ Ադրբեջանը մրցակից չի տեսնում ժողովրդավարության, հանդուրժողականության, մարդու իրավունքների, տնտեսական ազատությունների, մամուլի, խոսքի եւ այլ հիմնարար ազատությունների առումներով: Ըստ նախարարի, «Մեր պետությունների եւ հասարակությունների տրամաբանությունը եւ ուղղվածությունը հակադարձ համեմատական են: Ադրբեջանը խորացնում է ավտորիտարիզմի հիմքերը, Հայաստանը՝ ժողովրդավարության: Դա հստակ երեւում է միջազգային համապատասխան կառույցների գնահատականներում եւ վարկանշային աղյուսակներում: Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ իսկական տարբերություն կա»:**

**Ադրբեջանում, ըստ Նալբանդյանի, կարծում են, որ փողով կարող են հեղինակություն ձեռք բերել, բարեկամներ առնել, արձաններ կանգնեցնել, ինչ-ինչ կասկածելի բանաձեւեր անցկացնել եւ դա ներքին լսարանին ներկայացնել որպես ձեռքբերում, բարձր համբավի ապացույց:**

**«Փողի, խավիարի կամ անգամ նավթի առկայությամբ չէ, որ գնահատվում է երկրի հեղինակությունը միջազգային ասպարեզում: Վերջին տարիներին մենք ականատես եղանք, թե ինչ պատահեց ոչ պակաս հարուստ եւ ինքնագոհ բռնատիրական ռեժիմների հետ», հիշեցրել է Էդվարդ Նալբանդյանը:**

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

# Տիգրան Սարգսյան. «ID քարտը կարող է փոխարինել անձնագրին»

Վարչապետ Տիգրան Սարգսյանը երեկ կառավարության նիստից առաջ անդրադարձավ ID քարտերի եւ անձնագրերի կիրառման հարցերում եղած ահազանգերին: Նշելով, որ 2014-ի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու պարտադիր կենսաթոշակային ապահովագրական համակարգը, վարչապետը հայտնեց, որ դա ենթադրում է, որ շուրջ 270 հազար քաղաքացիներ իրականացնելու են վճարումներ իրենց անհատական հաշիվների վրա: Նրանք իրավունք պետք է ունենան ստանալու տեղեկատվություն, թե իրենց հաշիվներում ինչքան գումար է կուտակվել եւ պետությունն ինչպես եւ ինչ ծավալով է ավելացրել իրենց գումարները: «Դա ենթադրում է, որ նրանք կարող են օգտվել իրենց նույնականացման՝ ID քարտերով: Այսօր մենք ստանում ենք մեր քաղաքացիներից հարցադրումներ, թե այդ քարտը հնարավորությո՞ւն է տալիս քաղաքացուն օգտվելու բազմաբնույթ ծառայություններից, եւ իրենցից չպետք է պահանջեն անձնագիր: Չնայած որ մենք օրենսդրությամբ սահմանել ենք, որ ID քարտը կարող է փոխարինել անձնագրին, բայց բազմաթիվ օղակներում քաղաքացուց, բացի ID քարտից, պահանջում են նաեւ անձնագիր, ինչը չի համապատասխանում մեր օրենսդրության պահանջներին», նշեց Տիգրան Սարգսյանը:

Կառավարության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սարգսյանի, փոխոստիկանապետ Արթուր Օսիկյանի, արդարադատության նախարար Հրայր Թովմասյանի, Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանի, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանի բացատրություններից հետո, շարունակելով այս թեման, վարչապետը ընդգծեց, որ մինչեւ տարեվերջ պետք է որակապես փոխվի իրավիճակը եւ մեր ենթակառուցվածքները պատրաստ լինեն մեր քաղաքացիներին ID քարտերով սպասարկել: «Ասենք, օրինակ, նոտարները պետք է աշխատեն իրենց հետ, որպեսզի իրենք այդ քարտերը կարդացող սարքեր տեղադրեն եւ քաղաքացուն չուղարկեն անձնագրի հետեւից: Տեղեկանք ներկայացնելն անհարմարություն է քաղաքացու համար. նա գալիս է նույնականացման քարտով, ուղարկում ենք, որ տեղեկանք բերի, դա նույնն է, որ ուղարկես անձնագիր բերի», ասաց վարչապետը:

Ա. Մ.

# Նշանավոր ցեղասպանագետները՝ Երեւանում

Այսօր մեկնարկում է «Հայոց ցեղասպանություն. մարտահրավերներ հարյուրամյակի նախաշեմին» խորագրով միջազգային գիտաժողովը: ԳԱԱ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխանցմամբ՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի կազմակերպած միջազգային գիտաժողովի նպատակն է քննարկել եւ եզրակացություններ տալ երեք հիմնական ուղղություններով տարվող աշխատանքներին՝ Հայոց ցեղասպանության գիտական ուսումնասիրության եւ թանգարանային ցուցադրությունների կազմակերպման հետագա հեռանկարներն ու ուղղությունները, ժխտողականության դեմ արդյունավետ պայքար մղելու եղանակներն ու հրամայականները, Հայոց ցեղասպանության զոհերի եւ վերապրողների իրավահաջորդներին փոխհատուցման ու դրա հետ կապված խնդիրների իրավական հիմնավորումների քննարկում»:

Գիտաժողովի կազմակերպիչները համոզված են, որ գիտական քննարկումներով կձեւակերպվեն հստակ եզրակացություններ ու առաջարկներ Հայոց ցեղասպանության չուսումնասիրված ոլորտների ուղղությամբ գիտական աշխատանքների իրականացման եւ դրանց աջակցություն ցուցաբերելու համար: Գիտաժողովին կմասնակցեն նշանավոր մասնագետներ ամբողջ աշխարհից: Վահագն Տատրյանը, Իսրայել Չառնին, Թեսսա Հոֆմանը, Միհրան Դաբաղը, Անրի Թերյոն, Ռագիփ Զարաքոլուն, Յաիր Աուրոն եւ այլք երկու օր շարունակ կքննարկեն թուրքական ժխտողականության դեմ առավել արդյունավետ հակազդեցության մեխանիզմների ու եղանակների մշակումը:

Հ. Հ.

# Օբամա. «Պաղեստինցիներն անկախ պետություն կերտելու իրավունք ունեն»

Վերընտրվելուց հետո իր առաջին այցելությունը Իսրայել կատարած ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման երեկ այնտեղից ուղեւորվել է Ռամալլահ, որտեղ նրան դիմավորել է Պաղեստինի ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբբասը: Հանդիպումից հետո, ինչպես նշում է «Դունյա բուլթենի» լրատվական գործակալությունը, նախագահ Օբաման հայտարարել է. «Պաղեստինցիներն անկախ պետություն կերտելու եւ Իսրայելի օկուպացիայից ձերբազատվելու իրավունք ունեն: Միացյալ Նահանգների համար անընդունելի է իսրայելցի վերաբնակների նոր բնակավայրերի ստեղծումը: Իմ երկիրը կշարունակի Պաղեստինի պետության ստեղծմանն ուղղված ջանքերը»:

Հ. Չ.

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

**Ի հուշ գեղանկարիչ Հակոբ Հակոբյանի: Երվանդ Ազատյան. «Վերջին ուխտագնացութիւնը»:**

**Սփյուռքահայ գրող, մտավորական Անդրանիկ Ծառուկյանը Ռոմեն Կոզմոյանի հուշերում:**

**Ֆրանսիացի մնջախաղաց Մարսել Մարսոյի ծննդյան 90-ամյակի առիթով արտիստի աշակերտներից հայաստանցի, այժմ փարիզաբնակ Վահրամ Զարյանի «Մարսել Մարսոյի արվեստի հստակության առեղծվածը» հոդվածը:**

**Քննական կենսագրություն միայնակ ու թափառական մի պոետի՝ Հմայակ Շեմսը կամ «Դերվիշ» արվեստագետը՝ Հակոբ Ծուլիկյանի ներկայացմամբ:**

**Ազգային նվագարանների պատմությունն ու նշանակությունը՝ ըստ Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի աշխատակից Տիգրան Սարգսյանի:**

**Արման Մազմանյանի եւ Աննա Հեքեքյանի «Հայաստան եւ ճշմարտություն»՝ բեմադրությունը Լեւոն Մութաֆյանի եւ Ռաֆայել Ջրբաշյանի գնահատմամբ:**

Մ. Բ.

# Դիարբեքիրն անհամբեր սպասում էր Օջալանի հայտարարությանը

*Առաջնորդը PKK-ին կոչ արեց վայր դնել զենքն ու հեռանալ Թուրքիայի սահմաններից*

Հ. ՉԱՔՐՅԱՆ

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական եւ Ազգայնական շարժում կուսակցությունների ավելի քան բուռն հակազդեցությանն ու «դավաճանի» որակումներին դիմակայելու գնով, շարունակել իր բանակցությունները Մարմարա ծովի Իմրալի կղզում կալանված PKK-ի առաջնորդի՝ Աբդուլլահ Օջալանի հետ:



Շաբաթներ տեւող բանակցությունների ավարտին սպասվում էր, որ Օջալանը հանդես գա ամփոփիչ հայտարարությամբ: PKK-ի առաջնորդը նախապես հայտարարել էր, որ ինքը հայտարարությամբ հանդես է գալու մարտի 21-ին, Նովրուզի տոների կապակցությամբ, եւ այդ հայտարարությունը ընթերցվելու է Դիարբեքիրում: Օգտվելով առիթից, նշենք, որ Դիարբեքիրը քրդական շրջաններում վայելում է Հյուսիսային Քուրդիստանի մայրաքաղաքի համարում եւ մեծապես քրդաբնակ է:

CNN-Turk-ի վկայությամբ, երեկ Դիարբեքիրի կենտրոնական հրապարակում հավաքվել են տասնյակհազարավոր քրդեր, որոնց ձեռքի եղել է Քուրդիստանի դեղին, կարմիր, կանաչ գույներով դրոշը, Օջալանի պաստառներ, «Ազատություն Օջալանին» մակագրությամբ ցուցանակներ, որտեղ էլ հնչել է PKK-ի առաջնորդի երկլեզու հայտարարությունը:

*Տես էջ 8*

# Պայքար Երեւանի համար

Երեկ լրացավ Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցության համար կուսակցությունների համամասնական ցուցակները ներկայացնելու վերջին ժամկետը: Պարզ դարձավ, որ Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցելու են (եթե գրանցվեն) 6 կուսակցություն եւ 1 դաշինք՝ ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ, ՀԱԿ, ՀՅԴ, «Առաքելություն», «Ժառանգություն» («Բարեւ, Երեւան» դաշինք): Այսինքն վերջնականապես հաստատվեց, որ այն կուսակցությունները, որոնք նախագահական ընտրություններին թեկնածու չէին առաջադրել, որոշել են պայքարել Երեւանի համար: ՀՀԿ-ի համար, այդպիսով, պայքարը դժվարանում է, քանի որ այս անգամ նա մի քանի ուղղությամբ է ճակատ տալու. Երեւանի ընտրազանգվածից մի առյուծի բաժին տանելու են ԲՀԿ-ն, Րաֆֆու կողմնակիցները, իսկ որոշ բաժին էլ՝ ՀՅԴ-ն ու ՀԱԿ-ը: Եվ հավանաբար այս ընտրապայքարը շատ ավելի հետաքրքրական է լինելու այս իմաստով:



«Ժառանգություն» կուսակցության ցուցակի մասին երեկ Ազատության հրապարակում **Րաֆֆի Հովհաննիսյանն** ասաց, թե այդ ցուցակի առաջին համարն ապագա քաղաքապետն է՝ կուսակցության փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանը: Ցուցակն անուն էլ ունի՝ «Բարեւ, Երեւան», ու դա ԺՈՒԿ, «Ժողովրդավարական Հայրենիք», «Շրջադարձ», «ՀԱՍԿ» եւ Պահպանողական կուսակցությունների միատեղ ցուցակ է: Առաջին տասնյակի անուններն են՝ Ա. Մարտիրոսյան, Անահիտ Բախշյան, Մեսրոպ Մովսիսյան, Ստյոպա Սաֆարյան, Գագիկ Բաղդասարյան, Արթուր Գասպարյան, Դավիթ Սանասարյան, Արթուր Իսպիրյան, Կարլեն Ալեքսանյան, Անի Քոչար: Հովսեփ Խուրշուդյանը 13-րդ տեղում է, Իզաբելլա Աբգարյանը՝ 16-րդ:

ՀՅԴ ցուցակը 65 հոգուց է կազմված, առաջին 10 անուններն են՝ Արմեն Ռուստամյան, Աղվան Վարդանյան, Արսեն Համբարձումյան, Ալեսյա Բեջանյան, Արթուր Եղիազարյան, Արթուր Ղազարյան, Հովհաննես Սարգսյան, Մարգարիտ Խոստեղյան, Արամ Նազարյան, Լեւոն Գաբրիելյան:

ԲՀԿ-ն 194 հոգուց մի ծավալուն ցուցակ է ներկայացրել ԿԸՀ՝ Վարդան Օսկանյան, Գուրգեն Արսենյան, Աբրահամ Մանուկյան, Սերգեյ Բագրատյան, Մհեր Հովհաննիսյան, Թամարա Պողոսյան, Արսեն Ջուլֆալակյան, Գուրգեն Գասպարյան, Մարինա Մարգարյան, Պողոս Փլավչյան՝ առաջին տասնյակով:

ՕԵԿ-ը ներկայացրել է 105 հոգու ցուցակ՝ Արմեն Երիցյան, Հովհաննես Շահինյան, Սոֆյա Արթենյան, Հովհաննես Հովհաննիսյան, Հուսիկ Գեւորգյան, Ռուդիկ Ավդալյան, Ջուլիետա Թադեւոսյան, Վարդան Առաքելյան, Ֆելիքս Պերիխանյան, Սարգիս Կարապետյան՝ առաջին տասնյակով:

«Առաքելություն» կուսակցությունը, որը ստեղծվել էր վերջերս, 29 հոգուց կազմված ցուցակով է ներկայացված՝ Մեսրոպ Առաքելյան, Մանուկ Սուքիասյան, Հրաչյա Սարգսյան առաջին եռյակով:

ՀԱԿ-ը ներկայացել է 42 հոգու ցուցակով, առաջին հնգյակում՝ Վահագն Խաչատրյան, Զոյա Թադեւոսյան, Արման Մուսինյան, Վլադիմիր Կարապետյան, Տիգրան Տեր-Պետրոսյան:

ՀՀԿ ցուցակը 195 հոգի է՝ Տարոն Մարգարյան, Սմբատ Լպուտյան, Հովհաննես Թոքմաջյան, Հրաչ Պողոսյան, Հովիկ Մուսայելյան, Աստղիկ Գեւորգյան, Արա Երնջակյան, Մարտին Վարդազարյան, Ենոք Ազարյան, Լեւոն Իգիթյան:

ՀՀԿ ցուցակում մի շարք հետաքրքրական անուններ կան՝ դերասան Հրանտ Թոխատյանը, կինոռեժիսոր Միքայել Դովլաթյանը, ներկայիս փոխքաղաքապետ Կամո Արեյանը, Ցեղասպանության թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանը:

**Ս. Խ.**

# Թաթուլ Մանասերյան. «Պետք է ամեն ինչ անել գրանցելու երկնիշ տնտեսական աճ»

**Տնտեսագիտության դոկտոր, «Այլընտրանք» հետազոտական կենտրոնի տնօրեն Թաթուլ Մանասերյանը անդրադարձել է հետընտրական իրադարձությունների ազդեցությանը տնտեսության եւ գործարար աշխարհի վրա:**

«Նախագահական ընտրությունները, իմ կարծիքով, ցույց տվեցին, որ ձեւավորվում է նոր քաղաքական մշակույթ. ըստ որում ոչ միայն երկխոսության հնարավորությունների ընդլայնման, այլ նաեւ քաղաքական հանդուրժողականության առումով, որն ակնհայտորեն իրենով կարող է փոխարինել փոխադարձ ատելությունն ու անձնական անհանդուրժողականությունը», նշել է տնտեսագետը, ավելացնելով, որ, թեեւ նախընտրական փուլում եւ ընտրությունների ժամանակ, որպես կանոն, տնտեսությունն ու գործարար աշխարհը սպասումների մեջ են եւ լուրջ ու մասշտաբային ծրագրերը հետաձգվում են, այնուամենայնիվ, դատելով պաշտոնական վիճակագրության հրապարակած տվյալներից, հենց հունվար եւ փետրվար ամիսներին Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշն անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի բարձր աճ է արձանագրել: «Նույնը՝ արտահանման աճի տեմպերի մասով: Եվ սա՝ ձմռանը, երբ իրական գործարար աշխուժության մասին խոսելն ընդհանուր առմամբ դեռ վաղ է: Իսկ ամբողջ տարվա կտրվածքով գրանցվել է կանխատեսումները գրեթե կրկնակի գերազանցող տնտեսական աճ: Մեր համոզմամբ, սա խոսում է այն մասին, որ գործարար աշխարհն ավելի վստահ է նայում վաղվա օրվան ու հնարավոր զարգացումներին եւ անգամ նախընտրական շրջանում լուրջ մտավախություններ չի արձանագրել հնարավոր ցնցումների իմաստով», եզրակացրել է Թաթուլ Մանասերյանը:

Ըստ տնտեսագետի՝ հաշվի առնելով Հայաստանի տնտեսության եւ հայության մրցակցային առավելությունները, ինչպես նաեւ առկա մարդկային, բնական, արտադրական եւ ֆինանսական ռեսուրսները, բոլոր հիմքերը կան պնդելու, որ դրանց արդյունավետ օգտագործման պարագայում 7 տոկոս տնտեսական աճը կարող է լինել միայն հնարավորությունների ներքին սահման, իսկ իրականում՝ հենց այս տարվանից պետք է ամեն ինչ անել գրանցելու երկնիշ տնտեսական աճ:

«Մենք ակնկալում ենք աշխուժացում շինարարության ոլորտում, որտեղ նախորդ տարիներին գրանցվել է շարունակական անկում, ավելի համարձակ ծրագրերի իրագործում՝ գյուղատնտեսության ասպարեզում: Արդյունաբերության բնագավառում անհրաժեշտ է անցում կատարել հիմնականում հանքարդյունաբերության հաշվին ստացվող տնտեսական աճից դեպի այլ ճյուղերի զարգացում, մասնավորապես դեղագործության, ադամանդագործության, ոսկերչության, մեքենաշինության, կոնյակագործության, գինեգործության, սննդի վերամշակման, թեթեւ արդյունաբերության եւ ոչ մետաղական հանքաքարի վերամշակման հաշվին: Ինչ վերաբերում է ճշգրիտ մեքենաշինությանն ու մյուս ճյուղերին, ապա դրանց զարգացումը պահանջում է ոչ միայն ֆինանսական ռեսուրսներ, այլեւ այդ ճյուղերը համապատասխան մասնագետներով սնուցող միջին մասնագիտական կրթության համակարգի ձեւավորում եւ զարգացում», կարծիք է հայտնել Թաթուլ Մանասերյանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՈՒՈՒԹՅՈՒՆ

# Երկու օրինակ Սահմանադրություն, երկու օրինակ Աստվածաշունչ

*Կամ պարզապես՝ ինչպես միշտ*

**Իհարկե կարելի է գտնել ՀՀ Սահմանադրության եւ Աստվածաշնչի մեկ օրինակ եւս եւ դրանք ապրիլի 9-ին բերել այնտեղ, որտեղ կորոշեն Րաֆֆի Հովհաննիսյանն ու Նիկոլ Փաշինյանը, որպեսզի առաջինը անի այն, ինչ կանի Սերժ Սարգսյանը նույն օրը նույն պահին: Խնդիրն ամենեւին էլ դա չէ, խնդիրը Հայաստանում ներքին քաղաքական օրակարգի իսպառ բացակայությունն է: Ընդ որում, ապագա կառավարության նշանակումը չի կարող ներկա նշանակել քաղաքական օրակարգին, որովհետեւ ինչպես պարզ դարձավ նախագահի վերջին ասուլիսից, ապագա կառավարությունը կազմավորվելու է ոչ թե «ազգային համաձայնության», այլ կոալիցիոն համաձայնագրի հիման վրա: Հետեւաբար, Հայաստանը ապրիլի 9-ից հետո, ըստ ամենայնի, կունենա երկու կառավարություն՝ իսկական եւ ստվերային: Նախասիրության հարց է, թե ՀՀ քաղաքացիները որը կանվանեն իսկական, եւ որը՝ ստվերային: Ընդհանուր առմամբ մեր՝ «մեծ ժողովրդով, փոքրիկ երկրում» այս օրերին հենց սա է կատարվում, եթե չհաշվենք Երեւանի ընտրությունները: Ավագանու ընտրությունների գոնե այս՝ նախապատրաստական փուլը ապացուցում է մեր այն պնդումը, որ երկրում ներքին քաղաքական օրակարգ չկա: Մասնավորապես, ոչ իշխանական ուժերը, որոնք արդեն իսկ հայտարարել են երեւանյան ընտրություններում իրենց մասնակցությունը, չկարողացան գտնել մեկ-երկու օրակարգային դրույթներ, որոնց շուրջը կարելի էր համախմբվել, մանավանդ նախագահական ընտրություններից հետո հասարակական որոշ շրջանակներում առաջացած տրամադրությունների համապատկերում: Սա կարող էր ընդդիմության հաջողության գրավականը լինել, բայց այդպես չեղավ, իսկ եղավ, որովհետեւ Րաֆֆի Հովհաննիսյանը ցանկանում է տեսնել եւ ցույց տալ, թե անգամ «մյուսների» մասնակցության պարագայում ինքը Րաֆֆի Հովհաննիսյանն է, իսկ ԲՀԿ-ն ցանկանում է ցույց տալ վերջինիս, որ այն ընտրություններում, որտեղ ԲՀԿ-ն մասնակցում է, Րաֆֆի Հովհաննիսյանը ստանում է առավելագույնը հինգ տոկոս: Համաձայնեք, սա քաղաքական օրակարգ չէ, սա ամբիցիա է: Ու եթե մեր երկրում ապագա կառավարությունը կազմավորվելու է «ինչպես միշտ» սկզբունքով, եթե ընդդիմությունը շարունակում է «ինչպես միշտ»՝ ամբիցիաների ցուցադրությունը, ուրեմն որեւէ հեղափոխություն չի լինի, եթե անգամ... գտնվեն Սահմանադրության եւ Աստվածաշնչի մեկական օրինակներ եւս:**

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

# Ր. Հովհաննիսյանը ծրար է ուղարկելու նախագահ Սարգսյանին

Ազատության հրապարակում երեկ Րաֆֆի Հովհաննիսյանը հայտարարել է, թե ծրար է ուղարկելու նախագահի նստավայր: Այդ ծրարում լինելու են Ր. Հովհաննիսյանի դիրքորոշումն ու տեսակետները՝ ընտրությունների արդյունքում ստեղծված վիճակը հաղթահարելու վերաբերյալ:

# Գագիկ Գեւորգյանը՝ Ռուսաստանի ոսկերիչների գիլդիայի խորհրդի նախագահ

**Ինչպես տեղեկացանք Մոսկվայում մեր հատուկ թղթակից Լուսիկ Ղուկասյանից, մարտի 21-ին տեղի ունեցած Ռուսաստանի ոսկերիչների գլիդիայի համաժողովում նա-**



**խագահ է ընտրվել «Էսթետ» ոսկերչական տան նախագահ Գագիկ Գեւորգյանը: 2010-ից Գագիկ Գեւորգյանը ղեկավարում է Հայ ոսկերիչների համաշխարհային ասոցիացիան:**

**Ռուսաստանի ոսկերիչների գիլդիան ստեղծվել է 2000-ին եւ միավորում է Ռուսաստանի ոսկերչական բոլոր խոշոր եւ հեղինակավոր ընկերություններին: Մեր հայրենակցին Ռուսաստանի ոսկերիչների գիլդիայի ղեկավար ընտրելը վկայում է ռուսաստանյան գործընկերների կողմից նրա նկատմամբ ունեցած բարձր վստահության եւ ճանաչման մասին:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# 14 կետ՝ որպես հանձնարարություն Հայաստանին

«Չնայած 2012 թվականի մայիսի խորհրդարանական եւ 2013 թվականի փետրվարի նախագահական ընտրությունները, ընդհանուր առմամբ, թափանցիկ էին, Հայաստանը լուրջ ջանք գործադրեց մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խնդիրների լուծման ուղղությամբ, դեռեւս անհրաժեշտ են լրացուցիչ աշխատանքներ, մասնավորապես՝ օրենսդրություն ընդունելու եւ ի կատար ածելու առումներով», այսպիսի ընդհանրացմամբ է ներկայացվել Հայաստանում Եվրոպական հարեւանության քաղաքականության իրագործման առաջընթացը 2012 թ.-ին:

Եվրոպական հանձնաժողովը եւ ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչը մարտի 20-ին Բրյուսելում հրապարակել են «Հարեւանության ամենամյա փաթեթը», որը ներառում է համատեղ ուղերձ՝ «Գործընկերությունն ամրացնելու ուղղությամբ աշխատանքը», Հայաստանում Եվրոպական հարեւանության քաղաքականության իրագործման 2012 թվականի առաջընթացի գնահատմամբ, «Գործընկերություն հանուն ժողովրդավարության եւ համատեղ բարգավաճման» զեկույցը հարավային միջերկրական երկրների հետ, Արեւելյան գործընկերության 2012 թվականի զեկույցը, 12 երկրների զեկույցները (2012 թվականի զարգացումներն ու առաջարկվող գործողությունները), ներառյալ Հայաստանի զեկույցը եւ վիճակագրական ներդիր:

Փաստաթղթի համառոտագրի համաձայն, Հայաստանի կառավարության հետ քաղաքական երկխոսությունը 2012 թվականին խորացել է. «ԵՄ-Հայաստան ասոցացման համաձայնագրի («ԱՀ»), ներառյալ՝ Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու («ԽՀԱԱԳ») բանակցությունները լավ տեմպով առաջ ընթացան: Հայաստանը շարունակել է մակրոտնտեսական հիմնավոր քաղաքականություն եւ կառուցվածքային բարեփոխումներ իրագործել: Հայաստանը լրացուցիչ առաջընթաց է արձանագրել մակրոտնտեսական քաղաքականության, աղքատության կրճատման եւ սոցիալական համերաշխության ոլորտներում Գործողությունների ծրագրի նպատակներին հասնելու ուղղությամբ»:

Այս ամենին հետեւում է 14 կետից բաղկացած, մեղմ ասած, առաջարկությունների ցուցակ՝ «Հայաստանին կոչ է արվում» մատուցմամբ: Ըստ այդմ, կոչ է արվում լրացուցիչ քայլեր ձեռնարկել 2012 թվականի մայիսի խորհրդարանական եւ 2013 թվականի փետրվարի նախագահական ընտրությունների վերաբերյալ «ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի մատնանշած թերությունների ուղղությամբ՝ ի կատար ածելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաջարկությունները, այդ թվում՝ նախագահական ընտրությունից հետո օրենսդրական դաշտում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունը»:

Կոչ է արվում նաեւ ամբողջությամբ հետաքննել «2008 թվականի մարտի նախագահական ընտրություններից հետո բախումների ժամանակ տեղի ունեցած մահվան դեպքերը, ոստիկանությունում ազատազրկման ընթացքում դաժան վերաբերմունքի եւ արդար դատավարության խախտումների վերաբերյալ բողոքները», ապահովել Մարդու իրավունքների ազգային ռազմավարության իրագործումը, ձեւակերպել, ընդունել եւ ի կատար ածել հարակից Միջոցառումների ծրագիրը:

Եվրոպական հանձնաժողովը ակնկալում է Հայաստանից, որ նոր թափ հաղորդվի Մադրիդյան սկզբունքների համաձայնեցման ուղղությամբ Ադրբեջանի հետ գործադրվող ջանքերին՝ Մինսկի խմբի շրջանակում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների ստանձնած հանձնառություններին համահունչ, ինչպես նաեւ ապահովելու ԵՄ-ի ներկայացուցիչների համար Լեռնային Ղարաբաղը եւ հարակից շրջաններն անարգել այցելելու հնարավորություն՝ «հակամարտության վերափոխման աշխատանքներին սատարելու նպատակով, Մինսկի խմբի գործունեությունը լիովին փոխլրացնելու կարգով»:

Թեեւ վերջինը, ինչպես եւ հաջորդ կետն առավելապես պետք է Ադրբեջանին վերաբերեն, այդուհանդերձ, փաստաթուղթը Հայաստանին կոչ է անում «նպաստել հակամարտության կարգավորման առաջընթացի համար նպաստավոր միջավայրի ձեւավորմանը, խրախուսել եւ օժանդակել խաղաղության հաստատման հարակից աշխատանքների իրականացմանը»:

Մի շարք ոլորտներում բարեփոխումների իրականացման համար եւ դրանցով օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության հետ մեկտեղ զեկույցը շեշտում է կոռուպցիայի կանխարգելման եւ դրա դեմ պայքարի ուղղությամբ գործադրվող ջանքերի խորացման կարեւորությունը՝«այդ թվում՝ կյանքի կոչել 2012 թվականին ընդունված օրենքները եւ զարգացնել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի պետական հանձնաժողովի կարողությունները, անկախությունը եւ թափանցիկությունը»:

Առանձնակի ընդգծվել է, որ պետք է աշխատել «Մեծամորի ատոմակայանը հնարավորինս վաղ փակելու ուղղությամբ եւ ընդունել կայանի շահագործման դադարեցման մանրակրկիտ ծրագիր՝ հաշվի առնելով 2012 թվականի սթրես-տեստերի զեկույցի արդյունքները»:

Այս ամենն ընդհանրացվել է նաեւ այն մոտեցմամբ, որ 2012-ին ԵՄ-Հայաստան համագործակցության տարբեր ոլորտներում «նախաձեռնված, հաջողությամբ իրականացված կամ հետաձգված բարեփոխումների», «բավական թափանցիկ եւ մրցակցային խորհրդարանական ու նախագահական ընտրություններ անցկացնելու» կողքին «լրատվամիջոցների անկախության մակարդակը դեռեւս բավարար չէ, սահմանափակ քայլեր են իրագործվել բարձրաստիճան կոռուպցիայի դեմ պայքարում: Կառավարության եւ քաղաքացիական հասարակության համագործակցության ներկայիս շրջանակն անբավարար է:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

# Վարչապետը ուրախ է արդյունաբերության աճի եւ մտահոգ՝ շինարարության անկման համար

Վարչապետ Տիգրան Սարգսյանը երեկ անդրադարձավ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած հունվար-փետրվար ամիսների ցուցանիշներին: Արձանագրելով, որ տարին սկսվել է բարձր տնտեսական աճով, նա միաժամանակ մտահոգություն հայտնեց տնտեսական աճի կառուցվածքի առնչությամբ: «Մեզ ուրախացնում է այն հանգամանքը, որ արդյունաբերությունը շարունակում է բարձր ցուցանիշներ դրսեւորել, եւ մենք պետք է պահպանենք այդ տեմպերը 2013 թվականին: Բայց մտահոգիչ է շինարարության ցուցանիշը. 2012 թվականին մենք առաջին անգամ կասեցրեցինք անկման միտումը շինարարության ոլորտում եւ արձանագրեցինք տարվա արդյունքներով կեստոկոսանոց աճ շինարարության ոլորտում: Հունվար-փետրվար ամիսներին մենք շինարարությունում արձանագրել ենք անկում՝ շուրջ 8 տոկոսային կետով, եւ հասկանալի է, որ 2013 թ. տնտեսական աճի ցուցանիշն ապահովելու համար մեզ անհրաժեշտ է շինարարության ոլորտում իրականացնել պետական ծրագիր, հակառակ պարագայում մենք չենք կարող ունենալ աճի բարձր տեմպեր այդ ոլորտում», նշեց վարչապետը՝ հանձնարարելով էկոնոմիկայի, քաղաքաշինության, ֆինանսների նախարարություններին Կենտրոնական բանկի հետ շինարարության ոլորտի վերաբերյալ խորհրդակցություն կազմակերտել, հրավիրել ոլորտի բոլոր ակտիվ մասնակիցներին եւ հասկանալ, թե պետությունն ինչ քայլեր պետք է ձեռնարկի շինարարության ոլորտում աճի նորմալ, բնականոն ծավալներ ունենալու համար:

Ա. Ս.




# Կվերանորոգվեն մշակութային օջախները

407,5 մլն դրամ երեկ կառավարությունը հատկացրեց Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի պահպանման, վերակառուցման եւ արդիականացման, Հայաստանի ազգային գրադարանի հակահրդեհային եւ տեխնիկական անվտանգության համակարգերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մասնակի հարդարման եւ նորոգման համար:

Ա. Ս.

# Հանրակացարա՞ն, թե՞ վարձով տուն

Մարզաբնակ դիմորդը բուհ ընդունվելուց հետո կանգնում է մի շարք խնդիրների առաջ, որոնցից թերեւս ամենակարեւորը բնակության վայր ընտրելն է, որը լինի ե՛ւ էժան, ե՛ւ հարմարավետ:

Ավանի հանրակացարանում (նախատեսված է ԵՊՀ նախապատրաստական կուրսի օտարերկրացի ուսանողների համար, թեեւ այնտեղ բնակվում են նաեւ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի տարբեր կուրսերի ուսանողներ) վիճակը բավականին լավ է: Մեկ սենյակում սովորաբար բնակվում է երկու ուսանող, յուրաքանչյուրն, ըստ պայմանագրի, պարտավորվում է ամսական վճարել հինգ հազար դրամ, ինչպես նաեւ՝ կոմունալ վարձերը:

«Մեր հանրակացարանը փոքր է, ունենք 22 սենյակ, այժմ մեզ մոտ կա մոտ 30 ուսանող,- նշում է Ավանի հանրակացարանի պարետ **Հրաչյա Չոբանյանը**:- Այստեղ կան արաբ, պարսիկ, իսպանացի, ամերիկացի, ամերիկահայ, վիրահայ, ռուս, չինացի ուսանողներ»:

Վիրահայ ուսանողուհին, որը չցանկացավ ներկայանալ, նշում է, որ Ավանի հանրակացարանի պայմանները իրեն բավարարում են, եւ սենյակը բավականին հարմարավետ է:

Նրա հետ համակարծիք են նաեւ պարսիկ ուսանող, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ասպիրանտուրայի առաջին կուրսի ուսանող Ֆառուխ Նազարին, եւ չինացի ուսանող Խանգժոու Վանը, որ ուսանում է ԵՊՀ ռուս. բանասիրության 4-րդ կուրսում:

«4-րդ տարին է, ինչ բնակվում եմ այստեղ, - նշում է **Խանգժոուն**,- այստեղի սենյակներում կան սառնարան, բաղնիք, սանհանգույց, փոքրիկ անկյուն, որը ծառայում է որպես խոհանոց: Ես գոհ եմ այստեղի պայմաններից»:

Իսկ պարսիկ ուսանող **Ֆառուխը** նշում է. «Այստեղ բոլորը հարգում են միմյանց, չեն խանգարում իրար, գինն էժան է ու հարմար: Նախկինում վարձով էի ապրում, ավելի շատ էի ծախսում, իսկ այստեղ ապրելով՝ անհամեմատ ավելի քիչ, մանավանդ եթե նշեմ, որ գնի համեմատ պայմանները վատ չեն»:

Մենք եւս, լինելով Ավանի հանրակացարանում, համոզվեցինք, որ պայմաններն իսկապես վատ չեն:

Իսկ Ավանի հանրակացարանի բնակիչ **Հովիկ Վարոսյանը**, որ սովորում է Երեւանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում, նշում է, որ պայմաններից դժգոհ է:

«Սանհանգույցը եւ բաղնիքը ընդհանուր են: Անհարմարավետ է, պարզապես գնային տեսանկյունից հանրակացարանն ավելի հարմար է, քան վարձով տունը: Տարեկան վարձը կազմում է 30. 000 դրամ, կոմունալ վարձերը մասամբ ինքներս ենք վճարում (միայն հոսանքի վարձը)»:

Իսկ ժուռնալիստիկայի ֆակուլտետի վիրահայ ուսանողուհի **Լուսինեն** նշում է. «Ես վարձով եմ ապրում իմ երկու ընկերուհիների հետ՝ յուրաքանչյուրս 17. 000 դրամ վճարելով այդ տան համար: Պայմանները շատ լավ են, սենյակները հարմարավետ են, երբեւէ չեմ ապրել հանրակացարանում, կարծում եմ՝ շատ անհարմար են այնտեղի պայմանները»:

«Երբեւէ չեմ ապրել հանրակացարանում, այնտեղի պայմանները վատ են: Ես հետաքրքրվել եմ ու համոզվել եմ: Մի սանհանգույցից կամ բաղնիքից օգտվում է մոտ 30-40 անձ: Բազմաթիվ հիվանդություններ ու վիրուսներ կարող են լինել, չկան սանիտարահիգիենիկ բավարար պայմաններ: Ես նախընտրում եմ վճարել ավելի շատ, բայց ապրել նորմալ պայմաններում», - նշում է ՀՊՃՀ-ում սովորող վիրահայ ուսանողներց մեկը, որը ապրում է վարձով իր ընկերոջ հետ: Յուրաքանչյուրը վճարում է 25. 000 դրամ:

Այսպիսով՝ ուսանողներից շատերը նախընտրում են ապրել վարձով տներում, բայց հարկավոր է անել այնպես, որ ֆինանսական պայմանները եւ ցանկություններն «ընդհանուր հայտարարի գան»: Ստացվում է այնպես, որ շատերն ապրում են հանրակացարաններում, թեեւ դժգոհ են այնտեղի պայմաններից:

ՀԱՍՄԻԿ ԲԱԼԵՅԱՆ

# Սահմանամերձ գյուղերում պետությունը կվճարի հողի հարկը

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործվող հողի հարկի հարկի տարեկան գումարը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց փոխարեն կվճարի պետութունը: Այդ նպատակով երեկ կառավարությունը Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի եւ Տավուշի մարզպետարաններին հատկացրել է ավելի քան 54 մլն դրամ: Այդ համայնքներում ջրի դիմաց ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից գանձվող վարձավճարների նկատմամբ էլ 50 տոկոս զեղչ կկիրառվի: Այդ նպատակով պետությունը կհատկացնի մոտ 11 մլն դրամ: 16 մլն դրամ էլ կհատկացվի «Մեղրի» ջրօգտագործողների ընկերության սպասարկման տարածքում օգտագործվող ջրի դիմաց 50 տոկոս զեղչ կիրառելու նպատակով: «Այս փաստաթուղթը մենք պատրաստել ենք ՀՀ Նախագահի հանձնարարությամբ՝ լուծելու այն գյուղերի խնդիրները, որոնք գտնվում են այնպիսի գոտիներում, ուր, ցավոք, կրակոցներ են հասնում: Ապագայում եւս անդրադառնալու ենք խնդրին՝ այս համայնքներին օժանդակություն ցուցաբերելու նպատակով», նշեց վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Ա. Ս.

ԱԶԳ

## Հիմնախնդիր

Արտագաղթը Հայաստանի պատմության անբաժանելի մասն է: Դա համընդհանուր եւ ծանր բնույթ ընդունեց, երբ Հայաստանն անվերադարձ կորցրեց իր անկախ պետականությունը եւ բաժանվեց Թուրքիայի եւ Պարսկաստանի միջեւ: Արեւմտյան Հայաստանից հայերի արտագաղթը զանգվածային բնույթ ընդունեց 1915 թվականի ցեղասպանության հետեւանքով: Ձեւավորվեց հայրենիքից դուրս հայկական Սփյուռքը, որում այսօր ապրում է 10 միլին հայերից 7 միլիոնը: Ահա հայ ժողովրդի ժողովրդագրության այսօրվա տխուր ու դառը պատկերը: Այդ իրավիճակը վաուչերները, բնակչությունը չնչին գներով, որպես հացի փող, վաճառեց հին ու նոր սերտաճած նոմենկլատուրային: Բնակչության հարստության եւ եկամուտների բաշխման բեւեռացումը ահռելի չափեր ընդունեց: Ըստ 1998-1999 թվականների ՀՀ ազգային վիճակագրական ծառայության իրականացրած տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների՝ 20 տոկոս ամենաշատ եւ 20 տոկոս ամենաքիչ ապահովված բնակչության եկամուտների տարբերությունը հասավ 32 անգամի (Ռուսաստանի Դաշնությունում ընդամենը 16 անգամի դիմաց, իսկ եվրոպական Ռուսաստանում ժողովրդագրական ճգնաժամի նախադուռն է: ՄԱԿ-ի հաշվարկներով՝ Ռուսաստանի համար առաջիկա 25 տարիներին տարեկան 500-600 հազար դրսից եկող միգրանտ է անհրաժեշտ, որպեսզի իր ժողովրդագրական եւ սոցիալ-տնտեսական սրված ճգնաժամային խնդիրը լուծի:

Բացի վերը նշվածից, ավելացնենք, խիստ աճել է սոցիալական լարվածությունը: Կյանքի միջին տեւողությունն իջել է մինչեւ 39 տարեկան: 2010 թ. Ռուսաստանի կանանցն թիվը 10,7 միլիոնով ավել էր, քան տղամարդկանցը: 2002 թ. ամուսնացած զույգերի թիվը

# Արտագաղթը, միտումները եւ հաղթահարումը Հայաստանի Հանրապետությունում

չէր կարող հենց այնպես անհետ անցնել: Հայը դարձավ գաղթական՝ ներառելով հաղթելով ապրելու ազգային հոգեբանություն: Ճիշտ է, Խորհրդային Հայաստանի 1921 թ. մինչեւ 1973 թ. ներգաղթեցին 200 հազարից ավելի մարդ, բայց հայրենադարձությունը հետագա զարգացումներ չունեցավ: Ընդհակառակը, տարբեր պատճառներով, տարբեր ժամանակներում, տարբեր չափերով, նորից տեղ գտան հակառակ միտումները:

Դեռեւս Խորհրդային Հայաստանում ռեսուրսների սակավության պատճառով Ռուսաստանի եւ այլ հանրապետությունների այսպես կոչված «խամ ու խոպան» տարածքներում ամռան ամիսներին, երկար տարիներ, ձեւավորվեց եւ կայացավ (հատկապես գյուղական շրջաններից) ժամանակավոր արտագնա աշխատանքային միգրացիան: Այդ պրոբլեմի մասնագետ Ռ. Ստեփանյանի հաշվարկներով՝ խամ ու խոպան հողերից հանրապետության բնակչության ստացած տրանսֆերտները կազմել են 1960 թ. 486 հազար ռուբլի, 1966 թ. 6039 հազար ռուբլի, իսկ 1969 թ.՝ 10433 հազար ռուբլի: Նշանակում է, որ Խորհրդային Հայաստանը նույնպես զերծ չէր արտագնա աշխատանքային միգրացիայից:

Հայաստանում բնակչության արտագաղթի, ներգաղթի եւ աշխատանքային միգրացիոն հոսքերի նոր զանգվածային զարգացումներ դրսեւորվեցին 1988 թ. Սպիտակի երկրաշարժի, Ղարաբաղյան հակամարտության, ԽՍՀՄ փլուզման, Հայաստանի տնտեսական շրջափակման եւ երկրի տրանսֆորմացիոն հանգավոր վերափոխումների, ինչպես նաեւ արցախյան պատերազմի եւ այդ բոլորի արդյունքում՝ երկրի սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամի հետեւանքներում:

Սպիտակ 1988 թ. երկրաշարժը խլեց շուրջ 25 հազար հայի կյանք: Շուրջ 200 հազար աղետյալներ (հիմնականում կանայք եւ երեխաներ) տեղափոխվեցին ԽՍՀՄ այլ հանրապետություններ, որոնցից 150 հազարը վերադարձավ Հայաստան, իսկ 50 հազարը կորցրինք: Հետեւաբար, երկրաշարժի աղետի հետեւանքով Հայաստանն ունեցավ 25 հազար զոհ եւ 50 հազար անվերադարձ արտագաղթած, ընդհանուր 75 հազար մարդ: Այդ տարիներին ունեցանք նաեւ Ադրբեջանից եւ ԽՍՀՄ այլ տարածքներից փախստականների մոտ 420 հազար ներհոսք (360 հազար Ադրբեջանից) եւ 170 հազար հայաստանաբնակ ադրբեջանցիների արտահոսք: Դժբախտաբար, Ադրբեջանից Հայաստանում հայտնված փախստականների մեծ մասը 90-ական թվականների Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ բարոյահոգեբանական ծանր պայմանների պարագաներում արտագաղթեց Ռուսաստանի Դաշնություն եւ այլ երկրներ:

Արտահոսքի ծավալներն աճեցին հատկապես 1992-1994 թվականներին: Երկրաշարժի ավերածություններին գումարվեցին ատոմակայանի եւ «Նաիրիտ» արտադրական միավորման հանգավոր փակումը: Դա կաթվածահար արեց երկրի տնտեսությունը, փակվեցին բազմաթիվ ձեռնարկություններ, հազարավոր մարդիկ դարձան գործազուրկ՝ ապրելով ցրտի եւ մթի պայմաններում: Հայաստանի բնակչության համար սոցիալական մեծ աղետ էր բանկերում եւ խնայդրամարկղներում կուտակված շուրջ 11 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք՝ ընտանիքների ավանդների սառեցումը: Սա Հայաստանի բնակչության աննախադեպ ունեզրկում էր, որի պատճառով միջին դաս, փոքր եւ միջին ձեռնարկատիրություն չկայացավ, իսկ սեփականաշնորհումից ստացած զարգացած երկրներում՝ շատ ավելի փոքր): Տնտեսական խոր ճգնաժամը, զանգվածային գործազրկությունը, բնակչության ավանդների սառեցումը, նոմենկլատուրային անարդար սեփականաշնորհումը եւ եկամուտների բեւեռացումը բնակչության 56 տոկոսին աղքատացրին, եւ ընդամենը երեք տարում շուրջ մեկ միլիոն մարդ արտագաղթեց երկրից, նրանցից միայն 370 հազարը վերադարձավ: Արտագաղթածներից ավելի քան 610 հազար մարդ կամ երկրի 5 բնակչից մեկը չվերադարձավ: Դա ազգային աղետ էր, երբ ակտիվ տարիքի, միջինից բարձր կրթամակարդակի տղամարդիկ եւ կանայք հայտնվեցին ԱՊՀ երկրներում, հիմնականում՝ Ռուսաստանի Դաշնությունում, Եվրոպայում եւ ԱՄՆ-ում: Իր հետեւանքներով դա ժողովրդագրական ճգնաժամ էր, որը բնութագրվում է կանանց եւ տղամարդկանց բնականոն հարաբերակցության խաթարումով, ամուսնության եւ ծնելիության անկումներով, բնակչության ծերացումով, ամուսնալուծությունների աճով: Զանգվածային այդ արտագաղթից եւ ժողովրդագրական այդ մեծ խաթարումներից մինչեւ այսօր երկիրը խելքի չի գալիս:

2008-2011 թվականներին սոցիալ-տնտեսական ճգնաժամային իրավիճակից դուրս գալու եւ զարգացման միտումներ արձանագրելու շնորհիվ բնակչության միգրացիոն ակտիվությունը նվազեց, կայունացման միտումներ դրսեւորվեցին: Բացասական արտագնա գործոնները նվազեցին եւ տնտեսական աճի ու դրսից ստացվող տրանսֆերտներից բնակչության կենսամակարդակը սկսեց բարձրանալ, կայունացման ու զարգացման միտումներ նկատվեցին մանր եւ միջին ձեռնարկատիրության ոլորտում: Միգրացիայի բացասական մնացորդները սկսեցին նվազել, ինչը պարզ երեւում է ստորեւ բերվող աղյուսակից:

**Միգրացիան՝ Հայաստանի Հանրապետությունից (1000 մարդ)[1]**

| | Ներգաղթողներ | Արտագաղթողներ | Միգրացիայի մնացորդ (+,-) |
|---|---|---|---|
| 2007 թ. | 1,1 | 7,5 | -6,4 |
| 2008 թ. | 0,9 | 6,7 | -5,8 |
| 2009 թ. | 0,9 | 4,8 | -3,9 |
| 2010 թ. | 0,9 | 3,3 | -2,4 |
| 2011 թ. | 1,3 | 2,6 | -1,3 |

*1. Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012 թ. էջ 45:*

Արտագաղթը եւ աշխատուժի արտագնա միգրացիան հատուկ է ժամանակակից աշխարհին եւ ոչ միայն Հայաստանի Հանրապետությանը: Անգամ անսահման տնտեսական ռեսուրսներ եւ զարգացման մեծ հնարավորություններ ունեցող Ռուսաստանի Դաշնությունը ԱՊՀ երկրներից, այդ թվում նաեւ Հայաստանի Հանրապետությունից ոչ միայն մեծ ծավալներով աշխատանքային միգրանտներ ընդունող երկիր է, այլեւ մեծ չափերով միգրանտներ արտահանող երկիր: Այդպես, արդեն 2010 թ. Ռուսաստանի բնակչությունը կրճատվեց ավելի քան 10 միլին մարդով՝ մեկնողների եւ վերադարձողների բացասական հաշվեկշռով, իսկ Ռուսաստանի Դաշնության միգրացիոն ծառայության հաշվարկներում՝ 2011 թ. Ռուսաստանից դուրս է եկել 7,7 միլիոն միգրանտ: Ընդ որում՝ ուսումնասիրողները նշում են, որ ներկայումս Ռուսաստանի Դաշնությունից մեկնում են նաեւ որակյալ մասնագետներ եւ երիտասարդներ: Ավելին, ժողովրդագրական մասնագետները կանխատեսել են, որ մինչեւ 2025 թվականը Ռուսաստանից կհեռանա եւս 10 միլին մարդ: Դա նվազեց մեկ միլիոնով, աճեց ամուսնալուծվածների թիվը: Այդ պատճառով ժամանակակից Ռուսաստանը դարձել է միգրացիոն կախվածության երկիր, իսկ նրա տնտեսությունը՝ միգրացիոն կախվածության տնտեսություն:

Ժողովրդագրական նման բնույթի ոչ ցանկալի զարգացումները բնորոշ են նաեւ ԱՊՀ համարյա բոլոր երկրներին՝ իրենց առանձնահատկություններով: Անգամ շատ թե քիչ սոցիալ-տնտեսական նորմալ զարգացում ունեցող մերձբալթյան հանրապետություններում նույնպես առկա են նման բնույթի միգրացիոն զարգացումներ: Հատուկ մասնագիտական հարցումներով պարզվել է, որ ժամանակակից Լիտվայի հարցվողների 80-90 տոկոսը պատրաստակամություն է հայտնել աշխատանքի մեկնելու արտասահման: Երկու միլիոնից քիչ ավելի բնակչություն ունեցող Լիտվայի համար դեպի դուրս միգրացիոն մեծ հոսքերը վտանգավոր չեն, քանի որ չունի ագրեսիվ թշնամի հարեւաններ եւ, հետեւաբար, ազգային անվտանգության խնդիրներ: Այլ է այսօրվա Հայաստանի Հանրապետության վիճակը: Որպես ինքնուրույն եւ անկախ երկիր՝ գոյատեւելու համար երեք միլիոնից քիչ ավելի բնակչությունը կրճատվելու իրավունք չունի: Ուստի դա մեր ազգային անվտանգության ամենաասուր խնդիրն է, լինել, չլինելու հարցն է: Այլընտրանք չունենք: Արտագաղթի կանխման ժամանակակից չափերը եւ միտումները պետք է լուծեն պետությունը, ողջ ժողովուրդը, աշխարհի ողջ հայությունը: Դա ոչ միայն Հայաստանի, այլեւ Սփյուռքի ողջ հայության հայ մնալու խնդիրն է: Սփյուռքը ունի 7 միլիոն հայ՝ շուրջ 2,5 անգամ շատ, քան Հայաստանը, միեւնույն է, Աստված մի արասցե, Հայաստան չլինելու դեպքում շատ կարճ ժամանակահատվածում նրանք կդադարեն հայ լինելուց: Իսկ հայը պետք է ոչ միայն մեզ, այլեւ աշխարհին: 1987 թվականին Բեյրութում մի ընդունելության ժամանակ դաշնակցական լիդերներից մեկը նուրբ շեշտադրումով ասաց, որ «Հայը մարդկության աղն է»: Պետք է այդ ճշմարտությունը հասցնել աշխարհին: Մենք ունենք դառը փորձ, աշխարհը կարող է երեք ժամով «ուշանալ» եւ ամեն ինչ կորած տեսնել: Ուստի մեր գլխի ճարը մենք պետք է տեսնենք: Պետք է ամեն ինչ անենք. նախ կանխենք արտագաղթը եւ ավելացնենք բնակչությունը, ինչպես բնական աճի, այնպես էլ մեխանիկական աճի խթանումներով: Դա է Հայաստանի փրկությունը:

Միաժամանակ ուզում եմ ավելացնել: Չարտագաղթելու համար պետք է նաեւ շատ սիրել Հայաստանը, պետք է սիրել Կոմիտասի, Հովհաննես Թումանյանի, Չարենցի, Ալեքսանդր Թամանյանի, Ավետիք Իսահակյանի, Մարտիրոս Սարյանի, Հովհաննես Շիրազի, Պարույր Սեւակի, Համո Սահյանի, Վիլյամ Սարոյանի, Արամ Խաչատրյանի եւ ազգային հերոսներ Անդրանիկի եւ Նժդեհի նման:

Այսօր մեր ժողովուրդը, մասնավորապես՝ երիտասարդությունը, արդյոք ստանո՞ւմ է համապատասխան հայրենասիրական դաստիարակություն եւ հոգեբանություն: Ո՛չ:

**Գ. Ա. ՂԱՐԻԲՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,**
**ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## Ծակատագրի զոհը

**Ասում են՝ աչքերը հոգու հայելին են: Նայիր մարդու աչքերին ու կթափանցես հոգու խորքը:**

**Տիկին Մարիամի աչքերում միշտ քարացած արցունքի կաթիլներ կան: Արտաքուստ գեղեցիկ ու խնամված, իսկ ներքուստ կոտրված ու դժբախտ է նա:**

**Շատերն իրենց խեղված ճակատագրից են բողոքում: Իսկ տիկին Մարիամն իր դժբախտության մեջ մեղադրում է մենակ իրեն, իր միամտությունն ու ազնվությունը: Շատերը մտածում են, որ նա 18 տարի Դուբայում կյանք վայելած երջանիկ ծնող ու հոգատար տատիկ է, հրաշալի ընտանիքի տեր մի անձնավորություն... Իրականում նա ընդամենը այդ ընտանիքի աղախինն ու դայակն է...**

**«19 տարեկան աղջիկ էի, հարգված ու անունով ընտանիքի աղջիկ,- պատմում է տիկին Մարիամը,- հազար ուզող ունեի, բայց ծնողներս չէին ամուսնացնում. ինձ հետ կապված մեծ հույսեր ունեին. սովորում էի ինստիտուտում, լավ աշխատանքի հեռանկարներ կային... Իսկ ի՞նչ ստացվեց: Մի գող-ավազակ կար, որն ինձ անընդհատ հետեւում էր, ընկերուհուս հարեւանն էր, բոլորը վախենում էին նրանից, բայց հարգված ու նամուսով տղա էր, նրան «բիճ» էին անվանում, մի քանի անգամ նստած-ելած տղա էր... մոտիկ էր ընկերուհուս հետ...**

**Ընկերուհուս ծնունդն էր. կյանքում առաջին անգամ ալկոհոլ օգտագործեցի՝ ընկերներիցս հետ չմնալու համար: Այդտեղ էր նաեւ «բիճ»-ը: Ոչինչ չեմ հիշում, միայն հիշում եմ, որ առավոտյան արթնացա ու տեսա, որ «բիճ»-ի տանն եմ... բաժակիս մեջ քնաբեր էին լցրել, իմ ամենամոտ ու վստահելի ընկերուհին... «Բիճն» ինձ սպառնաց, որ եթե իրենց տնից գնամ, ամբողջ քաղաքով խայտառակ կանի: Համոզվեցի, թասիբի համար մնացի ու կործանեցի կյանքս: Ծնողներս ինձնից երես թեքեցին: Ամեն օր «բիճ»-ը սպառնում էր, որ եթե լքեմ իրեն, կսպանի, նույնիսկ դանակով փորձել է կտրել կոկորդս (պարանոցային խոր սպի կա), մի կիլո սուրճով հազիվ կանգնեցրին արյունը... Կյանքս դժոխք էր դարձել: Միայն որդուս ծնվելուց հետո ծնողներս հաշտվեցին իրականության հետ ու եկան ինձ տեսնելու: Ամեն օր երազում էի փախչել այդ տնից, ազատվել ամուսնուս կտտանքներից: Իսկ տղաս հոր կտորն էր մեծանում...**

**Մի օր «բիճ»-ը նորից ձերբակալվեց: Ես որդուս թողեցի ծնողներիս մոտ ու եղբայրներիս օգնությամբ փախա Դուբայ: Այնտեղ աղախին էի աշխատում, դայակություն անում ու փող ուղարկում տղայիս: Երկու տարի հետո իմացա, որ տղաս ձերբակալվել է գողության համար, վերադարձա Հայաստան, այստեղ էլ իմացա, որ տունս ու ունեցածս ծախել է, այլեւս ոչինչ չունեմ: Այդ ժամանակ ուզում էին մեռնել, բայց դիմացա, մեջս ուժ գտա ու նորից գնացի Դուբայ: Աշխատում էի ու փող հավաքում, որ տղաս գոնե բերդից դուրս գալուց հետո լավ ապրի... Իսկ ամուսնուս բերդում սպանեցին: Տղաս հենց ազատվում էր բանտից, մեկ ամիս չանցած՝ նորից ընկնում էր այնտեղ:**

**Ես բազմանդամ ընտանիք էի երազում, չորս երեխա, իսկ ի՞նչ ստացա. միայն կարիք, ծեծուջարդ ու մի անարժան զավակ...**

**Դուբայում ծանոթացա մի ընտանիքի հետ, խնամում էի երեխաներին, տունն էի մաքրում, այնքան մտերմացանք, որ դարձա նրանց ընտանիքի լիիրավ անդամն ու նրանց հետ վերադարձա հայրենիք:**

**Որդիս մինչեւ հիմա բանտում է, մի քանի օրով դուրս է գալիս եւ նորից ձերբակալվում: Եղբայրներս ասում են, որ գնամ իրենց տանն ապրեմ, բայց երեխաները չեն թողնում, նրանք ինձ տատիկ են անվանում, իսկ նրանց մայրը՝ մայրիկ: Ինձ պայքարելու ուժ են տվել միայն այս հրաշալի ընտանիքը եւ հույսը, որ մի օր տղաս կազատվի բանտից, ու ես նրան ճիշտ ուղու վրա կդնեմ: Ամեն օր աղոթում եմ Աստծուն, որ ինձ ուժ տա՝ պայքարելու ու տեսնելու իմ երազած բազմանդամ ընտանիքը, որդուս ընտանիքը...»:**

**ԼՈՒՍԻՆԵ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**
**ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետ**

# Ադրբեջանում վերադառնում է գործակալների ժամանակը

Նովրուզի տոնախմբությանը ելույթում Իլհամ Ալիեւը «Մառ»-ական միտք է հնչեցրել. «Ադրբեջանական ազգային արժեքները, որ կազմում են պետականության հիմքը, ավելի լավն են, քան եվրոպականը»: Ադրբեջանի պետականության հիմքում, ինչպես պնդում է պաշտոնական քարոզչությունը, դրված է «հեյդարիզմը»: Նշանակում է, ըստ Իլհամ Ալիեւի, Ադրբեջանի ազգային արժեքներն ամփոփված են «հեյդարիզմում»:

Ի՞նչ է «հեյդարիզմը»: Դա «ուսմունք» է, թե ինչպես կարելի է տիրանալ իշխանությանը եւ դարձնել ժառանգական: Այս արժեհամակարգն Իլհամ Ալիեւը գերադասում է եվրոպականին: Այսինքն, Եվրոպային հասկացնում է, որ իր հետ զուր հույսեր չկապեն: Չեն լինելու ընտրական օրենսդրության բարելավում, հավաքների ազատություն, ոչ էլ կալանավորված ընդդիմադիրներն են ազատ արձակվելու:

Պետք չէ, որ նա խոսի ուղղակի: Այդ մասին վկայում են իշխանության գործակալները: Մասնավորապես, երրորդ օրն է, ադրբեջանական մամուլը քննարկում է Բաքվում պաշտպանության նախկին նախարար Ռահիմ Գազիեւի ձերբակալության, մի քանի ժամ անց ազատ արձակման թեման: ՆԳ նախարարությունը պաշտոնապես ծանուցել է, որ Գազիեւը «հայտնվել է տեղանքում, որտեղ իրականացվում էր հետախուզման մեջ գտնվող զինված հանցագործին ձերբակալելու գործողություն, աղմուկ-աղաղակ է բարձրացրել, չի ենթարկվել ոստիկանության օրինական պահանջներին», որի համար էլ տարվել է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն, ապա ազատ արձակվել:

Ինքը՝ էքս նախարար Գազիեւը պնդում է, որ տնից դուրս է եկել, որպեսզի գնա «Ազատություն» ռադիոկայանի խմբագրություն՝ որպես «Աշխատանքից հետո» հաղորդման հյուր, մի քիչ քայլել է, երբ հետեւից իրեն «բռնել են, գլխին հագցրել սեւ տոպրակ, գլորել գետնին, ապա տեղավորել մեքենայում եւ տարել»: Գազիեւի ասելով՝ իր «գլխից սեւ տոպրակը հանել են միայն ոստիկանությունում»:

Արտառոցն այն է, որ Գազիեւը ոչինչ չի նշում ոստիկանությունում անցկացրած մի քանի ժամվա մասին՝ հարցաքննվե՞լ է ինքը, ո՞ւմ կողմից, ինչի՞ համար եւ այլն: Իշխանություններին մոտ կանգնած haqqin.az-ը, սակայն, հղելով «իրավասու մարմիններին», գրում է, որ Գազիեւը «ոստիկանության կողմից զգուշացվել է «Ազադլըղ» թերթում նախագահ Իլհամ Ալիեւի հասցեին հնչեցրած սպանիչ քննադատության համար»:

Ավելի հասկանալի ասած, պաշտպանության նախկին նախարարին ձերբակալել, տարել են ոստիկանություն, ենթարկել «պրոֆիլակտիկ մշակման» եւ մի քանի ժամ հետո ազատ արձակել: Եթե մի փոքր բացենք փակագծերը, ապա պիտի ասենք, որ 1989- 93թթ. Ռահիմ Գազիեւը եղել է Հեյդար Ալիեւի գործակալը նախ Մութալիբովի, ապա Էլչիբեյի դեմ պայքարում: Այդ մասին նա խոստովանել է անձամբ՝ Մոսկվայում 1996-ին տված հարցազրույցում, երբ ասել է, որ Հեյդար Ալիեւի հետ պայմանավորվածություն է ունեցել, որ նրա իշխանության գալուց հետո կստանա փոխվարչապետի պաշտոն, սակայն «խաբել են, քանի որ բարձրագույն բոլոր պաշտոններն ստացել են նախիջեւանցիները»:

Գազիեւը Մոսկվայում ապրել է 1993-98թթ.՝ որպես «փախստական վտարանդի»: 1998-ին ռուսաստանյան կողմը նրան արտահանձնել է Ադրբեջանին, որտեղ դատվել է «պետական դավաճանության՝ Շուշին եւ Լաչինը հանձնելու» մեղադրանքով, դատապարտվել գնդակահարության, ապա՝ ցմահ ազատազրկման: 2005-ին Իլհամ Ալիեւի որոշմամբ Գազիեւը բանտից ազատ է արձակվել եւ անցած տարիներին երբեք հրապարակային գործունեությամբ չի զբաղվել:

Եվ հանկարծ... «Ազադլըղ» թերթում Գազիեւը տպագրում է Իլհամ Ալիեւին «սպանիչ քննադատության ենթարկող հոդված», նրան ձերբակալում են, զգուշացում անում, ապա ազատ արձակում, իսկ մամուլում հայտնվում են մեկնաբանություններ, որ «Գազիեւն ավանդաբար համարվում է ռուսաստանյան շրջանակների ներկայացուցիչ»: Մի քանի օր առաջ «ֆեյսբուքային հեղափոխություն նախապատրաստելու» մեղադրանքներ էին հնչել ԱՄՆ Ազգային ժողովրդավարության ինստիտուտի հասցեին:

Իշխանություններին շատ պետք էր «պարիտետ պահել», եւ Ռահիմ Գազիեւն «արթնացել է որպես ռուսաստանյան կողմնորոշման գործիչ»: Այ սա, իրոք, «հեյդարիզմ» է՝ տպավորություն ստեղծել, թե աշխարհի բոլոր հզորները «Ադրբեջանում իշխանափոխության խարդավանքներ են հյուսում», քարոզչությամբ շրջանառել այդ առասպելը, հասցնել մինչեւ վերջին չոբանի եւ բանջարաբույծի գիտակցությանը, ապա գրեթե արտակարգ դրության պայմաններում նախագահական «ընտրություններ» անցկացնել, «ստանալ ժողովրդի ձայների 80 տոկոսը» եւ եւս 5 տարի ասել, որ Ադրբեջանում «ընդդիմությունը չի վայելել եւ չի վայելում ժողովրդի անգամ ամենաչնչին հատվածի աջակցությունը»:

Հայտնի է, որ նախկին գործակալ չի լինում: Նրանք ճիշտ ժամանակին հայտնվում են ճիշտ տեղում: Ինչպես որ հարկավոր պահին Ռահիմ Գազիեւը խաղաց «Ռուսաստանի գործակալի» դերը՝ իրականում շարունակելով մնալ Ալիեւների ընտանիքի շահերի սպասարկուն:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Խուզարկություն Քրիստին Լագարդի փարիզյան բնակարանում



Փարիզի ոստիկանությունը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կարգադրիչ տնօրեն Քրիստին Լագարդի բնակարանում խուզարկություն է անցկացրել պաշտոնեական լիազորությունների վերազանցման գործի քննության շրջանակներում: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ խոսքը ենթադրաբար 2007-2008 թթ. դեպքերի մասին է:

Լագարդի նկատմամբ քննությունը սկսվել է 2011 թ. օգոստոսին: Իրավապահները կասկածներ ունեն, որ նա Ֆրանսիայի ֆինանսների նախարար եղած տարիներին վերազանցել է սեփական իրավասությունները:

Ենթադրվում է, որ 2007 թվականին Լագարդը միջամտել է գործարար Բեռնար Տապիի եւ LCL (մինչեւ 2005 թ. Cre´dit Lyonnais) բանկի դատին, որոնք իրար հետ հաշիվներ ունեին 1990-ականներից: Լագարդը կողմերին խորհուրդ էր տվել դիմելու միջնորդ դատարանին, իսկ 2008 թվականին այդ ատյանը պետությանը պարտավորեցրել էր իբրեւ փոխհատուցում Տապիին վճարել 285 մլն եվրո:

«Տապիի գործը» սկսվել էր 1993-ին այն բանից հետո, երբ նա վաճառել էր Adidas ընկերությունում իրեն պատկանող բաժնեմասը, գործի վարույթը հանձնարարելով այդ ժամանակ պետությանը պատկանող Cre´dit Lyonnais-ին: Ավելի ուշ գործարարը հայտարարել էր, թե գործարքի ընթացքում բանկը խաբել է իրեն: Կողմերին երկար ժամանակ չէր հաջողվում փոխհամաձայնության հասնել:

Քրիստին Լագարդը նախագահ Նիկոլա Սարկոզիի կառավարությունում ֆինանսների նախարար դարձավ 2007-ին: 2011-ին Լագարդը ԱՄՀ կարգադրիչ տնօրենի պաշտոնում ընտրվեց Դոմինիկ Ստրոս-Կանի սկանդալային հրաժարականից հետո:

ԵՄ-Ի ԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ՄԻՋԵՎ

# Եվրոպան Կիպրոսին կօգնի մինչեւ երեքշաբթի




**Եվրոպայի Կենտրոնական բանկը երաշխավորում է Կիպրոսի բանկերին ֆինանսական արտակարգ օգնության հատկացումը մինչեւ երկուշաբթի՝ մարտի 25-ը: Դրանից հետո աջակցությունը կիրականացվի բացառապես Նիկոսիայում Եվրոմիության եւ ԱՄՀ-ի ծրագրի ընդունման դեպքում:**

**Ներկայումս ԵԿԲ-ն կիպրական բանկերի վճարունակությունը պահպանում է կանխիկ դրամի արտակարգ հատկացման ծրագրով, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Բանկի վարչության անդամ Յորգ Ասմուսենը կղզու իշխանություններին հորդորել է հնարավորինս շուտ որոշում ընդունել ֆինանսական օգնության ծրագրի վերաբերյալ:**

**Մինչդեռ «Ռուսաստան-ԵՄ. գործընկերության հնարավորություններ» կոնֆերանսում ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը «միանգամայն անհեթեթ» է անվանել ճգնաժամի կարգավորման նպատակով Եվրոպայի առաջարկած ծրագիրը:**

**Վերջինս բաղկացած է երկու մասից՝ միջազգային վարկատուների 10 մլրդ եվրո միջոցներից եւ 5,8 մլրդ եվրո սեփական փաթեթից, որը Նիկոսիան պարտավոր է ապահովել ավանդների հարկման հաշվին: Սակայն Կիպրոսի խորհրդարանը, ինչպես գրել էինք երեկ, մերժել է այդ ծրագիրը:**

# Աբբաս-Օբամա բանակցություններ եւ ասուլիս

**Ռամալլահի կառավարական համալիրում մարտի 21-ին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման բանակցել է Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասի եւ վարչապետ Սալեմ Ֆայյադի հետ: Բանակցությունների ավարտից հետո Աբբասը եւ Օբաման հանդես են եկել մամլո ասուլիսում:**

**Աբբասը իր ելույթում Իսրայելից պահանջել է սառեցնել նոր ավանների կառուցումը: Նա հայտարարել է, որ իր նպատակը Պաղեստինի պետության ստեղծումն է 1967 թ. հունիսի 4-ի սահմաններով եւ Երուսաղեմ մայրաքաղաքով: Նման պետությունը խաղաղ կգոյակցի Իսրայելի հետ, ասել է նա: Աբբասը ԱՄՆ-ին շնորհակալություն է հայտնել պաղեստինցիներին օգնելու համար, ապա ձայնը տվել է իր հյուրին:**

**Օբաման հայտարարել է, որ ԱՄՆ-ը ձգտում է պաղեստինյան անկախ պետության ստեղծմանը: «Դուք արժանի եք օկուպացիայի ավարտմանը, ազատության ու հույսի, արժանի եք ունենալու սեփական պետություն», ասել է նա, ավելացնելով, որ ԱՄՆ-ը Պաղեստինյան ինքնավարության բնակիչներին հատկացրել է լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Նախագահի խոսքերով, ապագա պաղեստինյան պետությունը կհամապատասխանի բոլոր կողմերի շահերին եւ պետք է լինի «տարածքային առումով ամբողջական»: Newsru.co.il կայքէջը ընդգծում է, որ Օբամայի ելույթում չի խոսվել 1967 թ. սահմանների մասին:**

**ԱՄՆ նախագահը Աբբասին հորդորել է չդիմել միակողմանի գործողությունների եւ բանակցել Իսրայելի հետ:**

# Եգիպտոսում պատրաստվում են մտցնել հացի քարտեր

**Եգիպտոսի մատակարարման նախարար Բասամ Ուդան հայտարարել է, որ երկու ամիս հետո կառավարությունը կսահմանի բնակչությանը սուբսիդավորված հացի վաճառքի խիստ չափաբաժիններ: Ոմանք ենթադրում են, որ պետբյուջեի պակասորդի կրճատմանն ուղղված այս քայլը կարող է էլ ավելի ապակայունացնել երկրի իրադրությունը:**

**Փորձնական նախագիծը գործի կդրվի հուզումներով համակված Պորտ-Սաիդում եւ դրա արվարձաններում: Քաղաքի յուրաքանչյուր բնակիչ կստանա էլեկտրոնային քարտ, որով կգնա խանութ:**

**Եգիպտոսի բնակչության մեծ մասի համար սուբսիդավորված հացը սննդաբաժնի հիմքն է: Այդ հացի գինն ամրագրված է. մեկ բլիթն արժե 5 պիաստր, այսինքն 1 սենթից պակաս: Անցյալում հաստատված սահմանափակումը (1 մարդուն՝ օրական 3բլիթ) չէր կատարվում, ինչը հանգեցնում էր մատակարարման ընդհատումների:**

**Սուբսիդավորված հացի մանրածախ գինը զգալիորեն ցածր էր դրա ինքնարժեքից: Կառավարությունը պարտավորվել էր տարբերությունը փոխհատուցել հացթուխներին: Սակայն վերջիններս պատմում են, որ իրենք ստանում էին գումարի միայն 2/3-ը, որը երբեմն վճարվում էր ուշացումով:**

**Պարենի համար նախատեսված պետական օժանդակությունը՝ սուբսիդիան կազմում է տարեկան 5,5 մլրդ դոլար: Տնտեսագետները խոստովանում են, որ ներկայիս համակարգն արատավոր է, սակայն նախազգուշացնում են, որ դեղամիջոցը կարող է բուն հիվանդությունից ծանր հետեւանքներ ունենալ: Այսպես, սուբսիդիաները վերացնելու նախագահ Անվար Սադաթի փորձը 1977 թվականին հանգեցրել էր «հացի խռովության»:**

Պ. Ք.

# Մշակույթ

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում բեմադրվել է Պերճ Զեյթունցյանի «100 տարի անց» պիեսը, որի բեմադրիչն է թատրոնի գլխավոր ռեժիսոր Տիգրան Գասպարյանը:

Պիեսի հերոսները 1915թ. Ցեղասպանության կազմակերպիչներից մեկի՝ Ջեմալ փաշայի եւ հայ վրիժառու Արտաշես Գեւորգյանի թոռներն են՝ Ջեմալն ու Անդրանիկը, ովքեր 100 տարի անց հանդիպում են Երեւանում եւ խոսում 1915-ին կատարվածի մասին: Անդրանիկի դերում հանդես է գալիս Տիգրան Ներսիսյանը, Ջեմալ փաշայի թոռանը մարմնավորել է Արմեն Մարությանը, իսկ Ջեմալ փաշային՝ Ազատ Գասպարյանը:



ներ, որոնք կան յուրաքանչյուր ներկայացման մեջ: Ընդգծեմ, որ իր հիմնական նպատակին ներկայացումը հասել է, ավելին՝ լավ է հասել: Մեկ անգամ նայելով տալ գնահատական, քննադատել ներկայացումը՝ չի կարելի: Ես երբեք չեմ հասկացել նման քննադատներին: Որպես դերակատարում, ինձ համար Տիգրան Ներսիսյանի խաղը ավելի քանի հուզիչ էր: Երբեք այդպիսին նրան չէի տեսել, բռավո: Իսկապես դժվար է նյութը դարձնել այնպիսին, որ նույնիսկ օտարազգին նայելով հասկանա, թե ինչի մասին է խոսքը: Ամենակարեւորը՝ մարդու մեջ արթնացնել հուզական ջիղերն այս հարցի վերաբերյալ: Պետք է տարին մեկ անգամ ծիծեռնակաբերդ

# «100 տարի անց»՝ անցյալ, ցավոտ ներկա եւ ...





Մեկ դար անց երկու թոռների միջեւ բարդ ու հոգեբանական ծանր երկխոսություն է ընթանում՝ քննարկվում են ազգային հարցեր:

Անդրանիկը ցավով նշում է, որ հայերը երբեք քնած մարդուն չեն կացնահարում: Թեեւ, դա թուրքերը չեն արել, բայց իրենց կրտսեր եղբայրն է արել: Ինչպես նաեւ ընդգծում է, որ ամոթալի է ուրիշի մշակութային ժառանգությանը տեր դառնալը եւ Այվազովսկուն էլ թուրք համարելը:

Իսկ կրտսեր Ջեմալը բարձրաձայնում է Հայաստանի եւ հայերի խոցելի հարցերը. «Ցեղասպանություն չէ՞, որ այժմ 1 միլիոն մարդ է գնացել Հայաստանից»: Լռություն է տիրում, Անդրանիկը նայելով Ջեմալի աչքերին՝ մտազբաղ պատասխանում է. «Ինքնաթիռի տոմսով վերադարձ կա, իսկ յաթաղանից՝ ոչ»:

Ջեմալը հակադարձում է. «Հայերը մի կտոր հացի համար Թուրքիայում են եւ այդ հացը հենց թուրքն է նրանց տալիս»: Այս ամենը հայի դեմքին շպրտելով հանդերձ, Ջեմալը նաեւ չի մոռանում անդրադառնալ Հրանտ Դինքին. «Մենք բոլորս հայ ենք, մենք բոլորս Հրանտ Դինք ենք: Այդ ցույցը կազմակերպեցին թուրքերը, մի՛ մոռացեք»:

Իսկ վերջում Հասան Ջեմալն արցունքախառն դեմքով բղավում է. «Էս ի՞նչ արիր, պապ, ես հիմա ի՞նչ պատասխան պիտի տամ»:

Ապա ցանկություն է հայտնում գնալ Ծիծեռնակաբերդ եւ ծաղիկներ դնել Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Պիեսի ավարտին բազմաթիվ հարցեր են մնում անպատասխան՝ մոռանա՞լ, ներե՞լ, թե՞...

Հանրության շրջանում հնչեցին հակասական կարծիքներ. ներկայացումը բուռն քննարկումների առիթ տվեց: «**Ազգը**» ներկայացման վերաբերյալ փորձեց զրուցել եւ կարծիքներ լսել թատերագետներից, թատերագիրներից եւ ռեժիսորներից, սակայն նրանցից շատերը խուսափեցին մամուլում իրենց կարծիքը հայտնելուց: Ինչեւիցե, «**Ազգը**» զրուցեց ներկայացման ռեժիսորի՝ **Տիգրան Գասպարյանի** հետ:

**- Ո՞րն է ներկայացման գերխնդիրը:**

- Խնդիրները, որոնք առկա են այսօր, մենք ներկայացման միջոցով փորձեցինք բարձրաձայնել: Խնդիրներ՝ որոնք յուրաքանչյուր հայի համար շատ կարեւոր են: Եթե դու հայ ես, ապա այդ խնդիրները չեն կարող չհուզել: Ներկայացման մեջ կան հարցադրումներ, սակայն չկա պատրաստի դեղատոմս: Ես դեմ եմ այն կարծիքին, որ թատրոնը կամ արվեստի որեւէ գործ պատրաստի դեղատոմս է:

Պերճ Զեյթունցյանը ներկա է եղել բեմադրական աշխատանքներին: Արդյոք այդ ընթացքում տեղի չե՞ն ունեցել դրամատուրգիական եւ ռեժիսորական հակադրություններ:

- 25 տարի առաջ, երբ բեմադրեցի «Ոսկի, դատարանն է գալիս», դեռ երիտասարդ, 27 տարեկան տղա էի: Եվ այդ ժամանակ Պ. Զեյթունցյանն ասաց. «Ես այն մարդկանցից չեմ, որ իր գրածներին վերաբերվում է ինչպես մարմարի վրա քանդակի: Կարող ես հանգիստ աշխատել նրա հետ, որեւէ հակադրություններ չեն եղել: Մեծ ուրախությամբ կարող եմ նշել, որ Պ. Զեյթունցյանը կարողանում է իր ստեղծագործությունները դարձնել արդի, ոչ թե առօրեական: Շատ հաճախ մարդիկ դրանք շփոթում են:

**- Արդյոք եղե՞լ են փոփոխություններ պիեսում:**

- Այո, եղել են հատվածներ, որտեղ առաջարկել եմ ինչ-ինչ փոփոխություններ կատարել: Դա կենդանի աշխատանք է: Ինչ-որ բաներ եթե հարկավոր չեն եղել, առաջարկել եմ հանել եւ նորը գրել: Մեծ հաճույքով եմ աշխատում Պերճ Զեյթունցյանի հետ եւ միայն հաճույքով եմ հիշում այն փորձերը, որոնց Պ. Զեյթունցյանը գալիս եւ մասնակցում էր:

**- Հնչեցին կարծիքներ, թե պիեսը թույլ է, այդ իսկ պատճառով էլ ներկայացումը թույլ է ստացվել: Ի՞նչ կասեք դրա մասին:**

- Նախ Պերճ Զեյթունցյանն այն գրողը չէ, որի ստեղծագործությունների մասին նման կարծիք հնչի: Երկրորդը, յուրաքանչյուր պիես հնարավորություն է տալիս ռեժիսորին աշխատելու: Իհարկե, եթե թույլ լինի պիեսը, ապա դժվար կլինի ռեժիսորի համար աշխատել, սակայն այս պիեսի հետ կապված ես համակարծիք չեմ: Նման արձագանքներ հնչեցին նաեւ, երբ մենք բեմադրել էինք Ջոն Արքա, որի առաջնախաղը տեղի ունեցավ Անգլիայում: Կասեմ միայն մի բան. թող նման «թույլ» պիեսներ շատ գրվեն:

**- Որպես ռեժիսոր կնշե՞ք, թե որո՞նք են ներկայացման հաջողված եւ ոչ այնքան հաջողված կողմերը:**

- Եկեք մեկնաբանությունները թողնենք հանդիսականին: Ես այժմ չեմ կարող պատասխանել այդ հարցին:

«**Ազգին**» հետաքրքրում էր նաեւ այլ մասնագետների կարծիքը ներկայացման շուրջ: Զրուցեցինք ռեժիսոր եւ դերասան **Վիգեն Ստեփանյանի** հետ: «Պերճ Զեյթունցյանի պիեսում արծարծված թեման շատ կարեւոր է մեզ համար: Այս պատմությունը մերն է եւ ուղղված է այն հային, որն իրեն թույլ է տալիս մոռանալ անցյալը՝ ասելով՝ ինչ եղել եղել է, պետք է նայենք ապագային: Չի կարող լինել ապագա առանց անցյալի: Ռեժիսորը գտել էր բավականին հետաքրքրական լուծումներ՝ բացակայում էին դեկորները, ինչպես նաեւ այլ օժանդակ հանգամանքներ, որոնք կան յուրաքանչյուր ներկայացման մեջ: ...

գնալով եւ ծաղիկներ դնելով սահմանափակվել, անտարբեր դառնալ»:

Ինչպես ազգային յուրաքանչյուր կարեւոր հարց ունի իր դեմ եւ կողմ արձագանքները, այնպես էլ այս ներկայացումը: Կարեւոր է, որ բեմադրության թեման առ այսօր արդիական է եւ անտարբերության մատնված չէ:

«**Ազգը**» զրուցեց նաեւ հանդիսատեսի հետ, որոնք արտահայտեցին տարատեսակ կարծիքներ: Օրինակ, **Լիլիթ Միրիջանյանն** ասաց. «Գիտեք, ներկայացումից հետո անմիջապես կարծիք հայտնելը դժվար է, դեռ տպավորությունների տակ ես, դեռ չես «մարսել» տեսածդ ու լսածդ: Կարեւորը թատրոնին հավատալն է: Խոսքս ներկայացման մասին չէ, թատրոն ասվածին է վերաբերում: Ներկայացման մասին կարող եմ ասել, որ թեման ցավոտ ազգային է: Ով էլ գրի, ով էլ բեմադրի, ում թոռներն էլ մեղա գան ու լան, ծաղկեպսակներ դնեն եւ բղավեն, որ թուրքն ու նրա թոռները փոխվել են, միեւնույնն է, կսկիծը հայի սրտում է, ես չեմ կարող ներել, չեմ հավատում»: Իսկ **Հայկ Խաչատրյանն** ասաց, որ յուրաքանչյուր ներկայացում իր ձեւի մեջ պրոպագանդա է. «Դերասանները լավ խաղացին, հուզեցին, փորձեցին համոզել հանդիսականին, բայց ոչ ինձ: Տեսա, լսեցի կոնկրետ դիքորոշումներ ջարդի, նաեւ այսօրվա հացի պրոբլեմների մասին: Թուրքի թուրք թոռան շուրթերից արտասանվեց արտագաղթի ու Թուրքիայում խեղճությամբ հաց վաստակող հայի մասին: Դա բոլորս էլ գիտենք: Ի՞նչ էր սա, արդարացո՞ւմ նախկինում եղածի համար, թե՞ ամոթանք ու պարսավանք: Ըստ իս, այս խնդիրը չպետք է խառնվեր 1915թ. ցեղասպանության թեմային: Ասվում է, որ սա էլ է ցեղասպանություն, գուցե: Այս խնդիրն էլ թող հայը բարձրաձայնի երկրի տիրակալներին, որպեսզի վաղն էլ նրանց զավակներն ու թոռները ծաղկեփնջեր չդնեն դատարկված ու փակ դռների դիմաց: Երկու թեմաները պետք չէր խառնել, սվաղել միմյանց հետ: Ներկայացումն իմ մեջ հակասական զգացումներ առաջացրեց»:

Մի բան հստակ է, որ յուրաքանչյուր հայ, ով կնայի ներկայացումը՝ եւս մեկ անգամ վերապրելով անցյալի ցավը, կվերանայի իր դիրքորոշումները, եւ կամ, ավելի շուտ, կսկսի նորովի մտորել:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## ՀայՖիլհարմոնիա, այսօր

Ծրագրում՝ *Շուման եւ Բրամս*

Այսօր, մարտի 22-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը հանդես կգա հերթական ուշագրավ համերգով: Ծրագրում՝ Շումանի թավջութակի կոնցերտը եւ Բրամսի թիվ 2 սիմֆոնիան:

Մենակատար՝ **Ալեքսանդր Հյուլսհոֆ**

(թավջութակ, Գերմանիա)

Դիրիժոր՝ **Էդուարդ Թոփչյան**

(գեղղեկ եւ գլխավոր դիրիժոր)

*Համերգի սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ՆՅՈՒ ՋԵՐՍԻ

# Երեկո նշանավոր գրող Հակոբ Հաչիկյանի հետ

*Հարցազրույց, քննարկում եւ շնորհանդես*

ՀԲԸՄ Արարատի, Պոլսահայ օգնության ընկերության (C.A.R.S), «Հայ տուն» ամերիկահայ կրթական կենտրոնի, Վարդան Բագրատունի ասպետների Նյու Ջերսիի ժողովարանի, Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի (NAASR), Նյու Յորքի հայ ուսանողների ասոցիացիայի, Թեքեյան մշակութային միության, Սուրբ Լեւոն հայկական եկեղեցու, Դպրեվանքի եւ Եսայանկենտրոնականի սանուց միությունների հովանավորությամբ առաջիկա ապրիլի 5-ին Նյու Ջերսիի Սուրբ Լեւոն հայկական եկեղեցում, ըստ ստացված հաղորդագրության, տեղի է ունենալու հանդիպում նշանավոր գրող Հակոբ Հաչիկյանի հետ:

Հանդիպումը, հարցազրույցը եւ քննարկումները անցկացնելու է Նյու Ջերսիի հայկական ռադիոժամի տնօրեն Վարդան Աբդոն: Քննարկման հիմնական թեման է լինելու գրողի 2012-2013 թվականներին հաստատված երեք՝ «Մոխրագույն կոստյումով երիտասարդը»,



«Ջուղարկված նամակներ», եւ «Էթնիկական որոնումներս» գրքերը:

Առաջինը, որին **«Ազգը»** անդրադարձել է մարտի 5-ի համարում, շարունակությունն է նրա նախորդ՝ միջազգային բեստսելլեր դարձած «Ամռանն առանց արշալույսի» վերնագրով բազում լեզուների թարգմանված ավանդավեպը: Թուրք մեծահարուստ փաստաբանը իր հոր հանկարծակի մահվան լուրն ստանալով, բացահայտում է հոր անցյալի հետ կապված որոշ գաղտնիքներ, այդ թվում Հայոց ցեղասպանությանը նրա մասնակցության վերաբերյալ:

Երկրորդ գիրքը «Ղարաբաղ շարժման» հիմնադիրներից, հետագայում Երեւանի քաղաքապետ Համբարձում Գալստյանի նամակների անգլերեն թարգմանություններն են: Նամակները նա գրել է Մոսկվայում բանտարկության ժամանակ:

Երրորդ գիրքը Թուրքիայում ապրող խմբավորումների դեմ կառավարության իրականացրած ճնշումների բացահայտման մասին է եւ այն մասին, թե ինչու նա ստիպված է եղել հեռանալ իր ծննդավայրից եւ հաստատվել Մ. Նահանգներում:

Երեկոյի վերջում ընդունելություն է տեղի ունենալու, որի ընթացքում հեղինակը մակագրելու է իր նոր գիրքը: Հ. Ծ.

# Մարզական

## Հենրիխ Մխիթարյանը հայտնվել է «Բարսելոնի», «Չելսիի» եւ «Մանչեսթր Սիթիի» ուշադրության կենտրոնում



Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը կրկին հայտնվել է եվրոպական առաջատար ակումբների ուշադրության կենտրոնում: Ինչպես տեղեկացնում է Gerchteticker-yob-ը, իսպանական «Բարսելոնը» Մխիթարյանին ընդգրկել է ակումբի տրանսֆերային ցուցակում: Կատալոնական ակումբը մտադիր է ամռանը թիմ հրավիրել Մխիթարյանին եւ բրազիլական «Սանթոսի» հարձակվող Նեյմարին, որոնք պետք է թիմում փոխարինեն Ալեքսիս Սանչեսին ու Դավիդ Վիյային: «Բարսելոնը» պատրաստ է Մխիթարյանի համար 25 մլն եվրո վճարել «Շախտյորին», որի հետ հայ ֆուտբոլիստի պայմանագրի ժամկետն ավարտվում է 2015-ի ամռանը:

Եթե նախկինում Մխիթարյանը հայտարարում էր, որ շարունակելու է խաղալ «Շախտյորում» մինչեւ պայմանագրի ավարտը, ապա տնտեսագիտական համալսարանի ուսանողների հետ հանդիպման ժամանակ նա նշել էր, որ կփորձի մրցաշրջանի ավարտից հետո ավելի բարձրակարգ թիմ տեղափոխվել: Գուցե դա պայմանավորված է նաեւ նրանով, որ «Շախտյորի» գլխավոր մարզիչ Միրչա Լուչեսկուն էլ հավանաբար կլքի թիմը:

The Mirror-ի փոխանցմամբ, Մխիթարյանով հետաքրքրված են Լոնդոնի «Չելսին» եւ Անգլիայի ներկայիս չեմպիոն «Մանչեսթր Սիթին»: Այս թիմերի մարզիչները վաղուց են հետեւում Մխիթարյանի խաղին եւ պատրաստ են օգնել Հենրիխին ավելի բարձրակարգ թիմ տեղափոխվելու հարցում:

Իսկ ահա հայտնի ֆուտբոլային գործակալ Վլադիմիր Աբրամովի կարծիքով, Հենրիխ Մխիթարյանն ամենայն հավանականությամբ կտեղափոխվի Մախաչկալայի «Անժի» կամ Սանկտ Պետերբուրգի «Զենիթ», իսկ վատագույն դեպքում՝ Մոսկվայի ԲԿՄԱ: Ըստ նրա, եթե Մխիթարյանը տեղափոխվի Մոսկվայի «Սպարտակ», ապա կսկսվեն խոսակցությունները, թե «Սպարտակը» հայկական ակումբ է:

Ինչեւէ, այս ամենը դեռեւս խոսակցություններ են ու դժվար է գուշակել, թե ինչպես կընթանա Մխիթարյանի ֆուտբոլային հետագա կարիերան: Կարեւորն այն է, որ Հենրիխը շարունակի կատարելագործել իր ֆուտբոլային վարպետությունը, որպեսզի առաջին հերթին մեծ օգուտ տա Հայաստանի ազգային հավաքականին, իսկ ավելի բարձրակարգ ակումբ տեղափոխվելու դեպքում էլ կարողանա ցուցադրել իրեն բնորոշ խաղն ու իր մշտական տեղն ունենա թիմի մեկնարկային կազմում:

## Հայաստանի հավաքականի վերջին փորձամրցումը



**Մարտի 26-ին չեխերի հետ Երեւանում կայանալիք ընտրական մրցախաղից առաջ ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը երեկ «Հանրապետական» մարզադաշտում իր վերջին փորձամրցումն անցկացրեց՝ ուժերը չափելով երիտասարդական հավաքականի հետ: Նախապես ծրագրված էր անցկացնել 3 խաղակես, 30-ական րոպե տեւողությամբ: Սակայն մարզադաշտի լուսավորության համակարգի խափանման պատճառով հանդիպումը տեւեց 2 խաղակես:**

Ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանն այս խաղում փորձարկեց ուսումնամարզական հավաքի հրավիրված ֆուտբոլիստների մեծամասնությանը: Մեկնարկային կազմում ազգային հավաքականի դարպասը պաշտպանում էր Ռոման Բերեզովսկին, աջ պաշտպանի դիրքում խաղում էր Կամո Հովհաննիսյանը, ձախ եզրում՝ Վալերի Ալեքսանյանը: Կենտրոնական պաշտպաններն էին Ռոբերտ Արզումանյանն ու Վարազդատ Հարոյանը: Հենակետայինի դիրքում հանդես էր գալիս Կարեն Մուրադյանը, աջից գործում էր Էդգար Մանուչարյանը, ձախից՝ Գեւորգ Ղազարյանը: Ենթահարձակվողներն էին Հենրիխ Մխիթարյանն ու Մարկոսը, իսկ առջեւի գծում գործում էր Յուրա Մովսիսյանը:

Խաղն անցավ ավելի փորձառու ազգային հավաքականի ֆուտբոլիստների առավելությամբ, որն ավելի ակնհայտ դարձավ երկրորդ խաղակեսում: Առաջին խաղակեսում հանդիպման 24-րդ րոպեին Մովսիսյան-Մխիթարյան-Մանուչարյան եռաքայլ կոմբինացիայից հետո վերջինս գրավեց Գոռ Մանուկյանի պաշտպանած դարպասը: Քիչ անց Կամո Հովհաննիսյանը աջ եզրով սրընթաց անցում կատարեց ու գնդակը հասցեագրեց տուգանային հրապարակ ներխուժած Յուրա Մովսիսյանին, որի գլխով հարվածը մի փոքր բարձր ստացվեց:

Ընդմիջումից հետո երկու հավաքականներում էլ մարզիչները մի շարք փոփոխություններ կատարեցին: Մասնավորապես երիտասարդական հավաքականի դարպասի պաշտպանությունը ստանձնեց Ռոման Բերեզովսկին, իսկ նրա փոխարեն ազգային հավաքականում հանդես եկավ Գեւորգ Կասպարովը: Երկրորդ խաղակեսում ազգային հավաքականի ֆուտբոլիստներին հաջողվեց երկու անգամ գրավել Բերեզովսկու պաշտպանած դարպասը: Աչքի ընկան Մխիթարյանն ու Մանուչարյանը: Երիտասարդական հավաքականը կարող էր կրճատել հաշվի տարբերությունը, սակայն Դավիթ Հակոբյանը նպաստավոր դիրքից վրիպեց:

Բնականաբար, հանդիպման արդյունքը առանձնակի նշանակություն չուներ մարզիչների համար: Առավել կարեւոր էր, որ նրանք գործի մեջ տեսան հավաքական հրավիրված ֆուտբոլիստներին, փորձարկեցին նրանց տարբեր դիրքերում եւ ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները:

Հուսանք, որ մարտի 26-ին Հայաստանի ազգային հավաքականը կազմ ու պատրաստ կներկայանա չեխերի հետ կարեւոր հանդիպմանը եւ իր հաջող խաղով կուրախացնի հայ երկրպագուներին:

## Արշավինին զուգարան մաքրողի աշխատանք է առաջարկվել

**Բրիտանական Paddy Power բուքմեյքերական գրասենյակը հավաքարարի աշխատանք է առաջարկել Լոնդոնի «Արսենալի» հարձակվող Անդրեյ Արշավինին, որը վաղուց կորցրել է տեղը թիմի հիմնական կազմում: Այս ընկերությունը հայտնի է անգլիական թիմերի հիմնական կազմից դուրս մնացած բարձր վարձատրվող ֆուտբոլիստներին աշխատանք առաջարկելու իր հումորներով: ՌԴ հավաքականի նախկին ավագին առաջարկվել է մաքրել Լոնդոնի «Էմիրեյթս» մարզադաշտի D տրիբունայի զուգարանը:**

**Paddy Power-ի գովազդային վահանակը տեղադրված է «Արսենալի» ակումբային խանութի հարեւանությամբ: Նախկինում բուքմեյքերական ընկերությունը նմանատիպ առաջարկներ էր արել նաեւ Ֆեռնանդո Տորեսին, Դարեն Բենտին, Պիտեր Օդեմվինգիին եւ Ժոզե Բոսինգվային:**

### ՇԱԽՄԱՏ

## Կառլսենը ստանձնեց առաջատարի դերը

Լոնդոնում ընթացող շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդների մրցաշարի 6-րդ տուրում ուշադրության կենտրոնում էր Լեւոն Արոնյանի եւ ադրբեջանցի Թեյմուր Ռաջաբովի մրցավեճը: Երկու շախմատիստներն էլ նախօրեին դժվարին մրցախաղեր էին անցկացրել ու գրեթե 6-ժամյա համառ պայքարից հետո հաշտություն էին կնքել մրցակիցների հետ: Բացառություն չկազմեց նաեւ մրցակիցների անձնական հանդիպումը, որն ավելի երկարատեւ էր: Թերթի համարը տպագրության ուղարկելու պահին պարտիան դեռ շարունակվում էր: Չէր ավարտվել նաեւ Գրիշչուկի եւ Գելֆանդի մրցավեճը:

6-րդ տուրից հետո մրցաշարի միանձնյա առաջատարի դերը ստանձնեց նորվեգացի գրոսմայստեր Մագնուս Կառլսենը, որը սեւերով 36-րդ քայլին հաղթելով Պյոտր Սվիդլերին, վաստակեց 4,5 միավոր: 3 միավոր ունեցող Սվիդլերն առաջին պարտությունը կրեց: Կրամնիկն ու Իվանչուկը հաշտություն կնքեցին:

Մրցաշարի առաջին շրջանի ավարտական՝ 7-րդ տուրից առաջ շախմատիստներին այսօր հերթական հանգստյան օրն է տրամադրվել: Իսկ վաղը կկայանան Արոնյան-Գրիշչուկ, Կառլսեն-Ռաջաբով, Գելֆանդ-Կրամնիկ եւ Իվանչուկ-Սվիդլեր պարտիաները:

## Հայ ըմբիշին չհաջողվեց մրցանակակիր դառնալ



**Թբիլիսիում ընթացող ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունում երեկ մրցագորգ դուրս եկան 74 կգ քաշային Գրիգոր Գրիգորյանն ու գերծանրքաշային Անդրանիկ Գալստյանը: Եթե վերջինս անհաջող հանդես եկավ՝ առաջին գոտեմարտում պարտվելով Գերմանիան ներկայացնող Նիկ Մատուհինին, ապա Գրիգոր Գրիգորյանը բավականին հաջող ելույթ ունեցավ:**

**Առաջին գոտեմարտում Գրիգորյանը հաղթեց հույն Ապոստոլոս Տասկուդիսին: Քառորդ եզրափակիչում հայ ըմբիշի մրցակիցը մոլդովացի Ալեքսանդրու Բուրկան էր: Այդ գոտեմարտում էլ Գրիգորը ուժեղ գտնվեց եւ կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճեց: Ցավոք, այդ փուլում հայ ըմբիշին չհաջողվեց հաղթել ռուսաստանցի Անվար Գեդուեւին: Գրիգորյանը ստիպված էր պայքարել բրոնզե մեդալի համար: Նրա մրցակիցը Բուլղարիան ներկայացնող Լեոնիդ Բազանն էր: Ցավոք, այդ գոտեմարտում էլ հայ ըմբիշը պարտվեց ու զրկվեց մեդալից:**

**Քաշային այս կարգում հանդես եկավ եւս մեկ հայ ըմբիշ՝ Չեխիան ներկայացնող Գուրգեն Բաղդասարյանը: Նա առաջին իսկ գոտեմարտում պարտվեց հունգարացի Գաբոր Հատոսին: Բայց քանի որ հունգարացի ըմբիշը հասել էր եզրափակիչ, ուստի Բաղդասարյանն իրավունք ստացավ մասնակցելու բրոնզե մեդալի համար մրցավեճին: Բայց այստեղ էլ նա անհաջողության մատնվեց առաջին գոտեմարտում՝ զիջելով Սերբիան ներկայացրած Զաուր Էֆենդիեւին:**

## Գյումրեցի դահուկորդները մրցակցությունից դուրս էին

**Շիրակի մարզում անցկացված դահուկավազքի Հայաստանի պատանեկան առաջնությունում բոլորին գերազանցեցին գյումրեցի դահուկորդները՝ տարբեր մրցաձեւերում ճանաչվելով ուժեղագույնը:**

**Տղաների 3 կմ դասական եւ ազատ ոճերի դահուկավազքերում Հայաստանի չեմպիոն հռչակվեց Արտակ Թորոսյանը: 5 կմ դասական ոճի դահուկավազքում ուժեղագույնը Գոռ Գեւորգյանն էր, իսկ ազատ ոճում լավագույն արդյունքը ցույց տվեց Սլավիկ Սիմոնյանը:**

**Աղջիկների մրցավեճում էլ գյումրեցի դահուկորդուհիներն էին մրցակցությունից դուրս: Կատյա Գալստյանը հաղթող ճանաչվեց 3 կմ դասական եւ ազատ ոճի դահուկավազքերում, իսկ Աննա Մխիթարյանն էլ հանրապետության չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց 5 կմ մրցատարածության 2 մրցաձեւերում:**

**Առաջնությանը մասնակցեցին Գյումրիի, Ամասիայի, Վանաձորի, Աշոցքի եւ Հրազդանի պատանեկան հավաքականները:**

## Թուրքիայում «Ռեալին» պատժամիջոցներ են սպառնում

**Ինչպես հայտնի է, Մադրիդի «Ռեալը» չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչում ապրիլի 9-ին Ստամբուլում մրցելու է «Գալաթասարայի» հետ: Այդ խաղում «Ռեալի» ֆուտբոլիստները չեն կարող հանդես գալ այն մարզաշապիկներով, որոնց վրա կա bwin մակագրությունը: Ինչպես հայտնի է, «Ռեալը» գովազդում է bwin բուքմեյքերական ընկերությունը: Իսկ Թուրքիայում արգելված է մարզական միջոցառումների ժամանակ բուքմեյքերական ընկերությունների գովազդը: Արքայական ակումբի ֆուտբոլիստները ստիպված կլինեն մարզաշապիկների վրա ժապավենով փակել այդ մակագրությունը, այլապես նրանց սպառնում է մինչեւ 2 տարվա ազատազրկում եւ խոշոր տուգանք:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Կներեք, ես Գարեգին Նժդեհը չեմ

Արդյոք կյանքում իմացե՞լ են միմյանց պատմական գրեթե նույն ժամանակում ապրած եւ ազատագրական պայքարի հակադիր ճակատներում պայքարած Գարեգին Նժդեհն ու հեղափոխական Սուրեն Սպանդարյանը: Ճակատագրի հեգնանքով այս երկու անունները ահա ավելի քան երկու տասնամյակ փոխկապակցված են Երեւանի Երրորդ մասի հրապարակում: Անունը՝ Նժդեհի անվան հրապարակ, արձանը ՝ Սուրեն Սպանդարյանի: Աբսուրդ, ինչը ծիծաղելի է ու նաեւ տխուր: Սա նույնքան անհեթեթ է, որքան եթե Սախարովի անվան հրապարակում լիներ Բրեժնեւի արձանը: Ի դեպ, լավ հարց «Ինչը՞, ե՞րբ, որտե՞ղ» հեռուստախաղի գիտակների համար. «Ո՞ւմ անունն է կրում երեւանյան այս հրապարակը եւ ո՞ւմ արձանն է սա»: Հաստատ չեն կարողանա պատասխանել:



Եվ ցավալին այն է, որ ահա ավելի քան քսան տարի տեւող այս անկապությանը երեւանցիներն արդեն սովորել են: Մի ամբողջ սերունդ է աճել, որ ի դեմս շինելն ուսերին վեհորեն կանգնած արձանի ճանաչում է էլ ում, եթե ոչ՝ Գարեգին Նժդեհին: Նույնիսկ ճարտարապետներն են արդեն շփոթում: Քսան տարի առաջ, երբ նոր էր տեղադրվել արձանը, լրագրողներս հենց այսպիսի ապագա էլ կանխատեսում էինք: Մամուլով, հեռուստատեսությամբ գրական բոլոր ժանրերը սպառեցինք՝ սարկազմ, սատիրա, ֆարս, ֆելիետոն... իզուր: Արձանի հեղինակներից մեկը մեր զրույցում ասաց, որ արձանի վրա շատ գումար է ծախսվել, եւ մինչեւ ծախսը «դուրս չգա», այն չի հանվի:

Քանի՜ քաղաքապետներ ու գլխավոր ճարտարապետներ փոխվեցին այս երկու տասնամյակների ընթացքում, սակայն ամոթալի այս երեւույթը ոչ մեկը ի զորու չէ վերացնել:

Երեւանցիների սիրված վայրերից էր այս հրապարակը տասնամյակներ առաջ, ուր ձկնակերպ արձանիկներից բխող շատրվանների ձայնին խառնվում էին մեծ ու մանուկի խոսքն ու ծիծաղը: Բրոնզաձույլ զարդաքանդակներն ու շատրվանները ապամոնտաժեցին, հանվեցին տրամվայի գծերը: Տեղը զիջվեց մետրոպոլիտենին: Հրապարակի եռուզեռը լռեց ու մնաց ստորգետնյա խանութներ ու տոնավաճառներ: Մետրոյի Երրորդ մասի կայարանը կոչվեց Սուրեն Սպանդարյանի անվամբ, հրապարակն էլ պետք է համահունչ լիներ: Պակասում էր միայն արձանը: Խորհրդային շրջանի վերջին տարիներն էին: Դարակազմիկ փոփոխությունները հաջորդում էին միմյանց: Արցախյան շարժում, խորհրդային համակարգի փլուզում, հայ ազգային ինքնության զարթոնք ու ընդվզում: Արձանը պատրաստ էր, իսկ դրսում արդեն փողփողում էր հայոց եռագույնը: Ի՞նչ անել, արձանի վրա ահագին ծախս էր արված... Գիշերով, ժողովրդի աչքից թաքուն, այնուամենայնիվ, տեղադրվեց պատվանդանին: Հետո հրապարակը վերանվանվեց Գարեգին Նժդեհի անվամբ, իսկ արձանը... դե, մի քիչ դիմագծերը կփոխենք, կսիրունացնենք, կնմանեցնենք Նժդեհին, կատակում էին ոմանք:

Խոսքս ամենեւին հեղափոխական գործիչ Սուրեն Սպանդարյանի դեմ չէ: Քավ լիցի: Մեծ հարգանք ներշնչող մի անուն՝ սկզբունքային հեղափոխական, խմբագիր, բազմաթիվ լեզուների տիրապետող մտավորական, սակայն ի՞նչ վաստակ է ունեցել նա հայ ժողովրդի կյանքում: Թերեւս լեգենդար Կամոյի, Գայի, Շահումյանի մասին շատ ավելին գիտենք...

Խոսքս հանուն հայոց Սպարապետ Գարեգին Նժդեհի է: Այսպե՞ս եք հարգում մեծ հայապաշտի երախտիքը: Չլիներ ցեղապաշտ Նժդեհը, Սյունիքն ու Զանգեզուրը կունենային Նախիջեւանի ճակատագիրը, իսկ Ղարաբաղը...

Հարկավոր է ի վերջո շտկել այս անհեթեթությունը, ինչը պատիվ չի բերում իր չորսհազարամյա տարեդարձին մոտեցող աշխարհի հնագույն մայրաքաղաքներից մեկին: Եթե արձանը չի փոխվելու, ուրեմն հրապարակը կրկին պետք է կրի Սուրեն Սպանդարյանի անունը, եթե ոչ, ապա իր անվան հրապարակում պետք է լինի իր՝ Գարեգին Նժդեհի արձանը: Իսկ Սպանդարյանի արձանի համար կարելի է գտնել մեկ այլ վայր:

**ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ**
**Նյու Յորք**

## Իրավացի մտքեր

Հարգելի Կարո Աթայան, Ձեր արտահայտած մտքերն իրավացի են:

Ցավոք սրտի, այդ ամենը մի (մի քանի) գրչի հարվածով եւ օրենքներով անհնար է իրականացնել: Հայաստանն էլ է անցնում գրեթե նույն ճանապարհով, ինչ նախկին սոցիալիստական ճամբարի բոլոր երկրները, շատ քիչ տարբերությամբ: Այդ բոլորին գումարած՝ պատերազմ եւ շրջափակում: Այս թեմայով շատ թեր եւ դեմ հարցեր կան: Լինելով լրագրող, իհարկե ծանոթ եք Եվրոպայում տեղի ունեցող իրավիճակներին, էլ չեմ ասում՝ աշխարհի, «Հայերն էլ պղտոր ջրում ձուկ որսացին»: Ովքե՞ր, նրանք ովքեր տարբեր պաշտոն ու դիրք ունեի՞ն: Այդ բաղձանքն ազգ չի ճանաչում:

Հարգանքով՝

**Ազատուհի Բենյան**

***Խմբ.-*** *Կարո Աթայանի հոդվածը լույս է տեսել «Ազգ»-ի նախորդ համարում:*

## Հայտարարություն

Գավառի տարածք. սպառ. կոոպ.-ը հրավիրում է կրկն. աճուրդի Վաճառվում է.

1. Նորատուս համայնքի ունիվերսամի շենքը 2.700.000 ՀՀ դրամ մեկնարկային գնով
2. Գանձակի տնտ. ապրանք. խանութի շենքը 1.115.000 ՀՀ դրամ մեկնարկային գնով

Աճուրդը կայանալու է դասական եղանակով Աճուրդը տեղի կունենա 2013 թ. ապրիլի 15-ին, ժամը 12.00-ին ՏՍԿ-ի վարչական շենքում

Հասցեն՝ ք. Գավառ, Զ. Անդրանիկի 69 (Շրջկոոպ)

Մանրամասն տեղեկ. համար զանգահարել 077-41-51-30 կամ 093-320-456 հեռախոսահամարներով

*Աճուրդային հանձնաժողով*
*Վարչ. նախ. Վ. Գեւորգյան*

**ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)**

**մարմնակրթության եւ սպորտի կենտրոնը հրավիրում է բոլոր ցանկացողներին մարզվելու կենտրոնում գործող հետեւյալ խմբակներում՝ լող, բազկամարտ, սեղանի թենիս, բասկետբոլ, աթլետիզմ: Ձեզ հետ կաշխատեն բարձրակարգ մասնագետներ: Ցանկացողներին խնդրում ենք զանգահարել 010567784: Հասցե՝ Տերյան 105, ՀՊՃՀ, 21-րդ մասնաշենք:**





# ՆԱՏՕ-ն «լիբիական սցենար» է մշակում ընդդեմ Սիրիայի

ՆԱՏՕ-ի անդամ մի շարք պետություններ մշակում են Սիրիայի քաղաքացիական պատերազմին միջամտելու համատեղ ռազմական ծրագրեր: Այդ մասին ԱՄՆ Սենատի զինված ուժերի հանձնախմբի նիստում հայտնել է ամերիկյան բանակի եվրոպական հրամանատարության ղեկավար Ջեյմս Ստավրիդիսը:



«Սիրիայում իրադրությունն օրեցօր վատթարանում է: Այդ հրեշավոր քաղաքացիական պատերազմի վերջը չի երեւում», ասել է նա՝ նշելով, որ այդ խնդիրը լուծելու համար բավական չէ պարզապես մարզել ընդդիմադիրներին եւ զինել նրանց:

Ծովակալ Ստավրիդիսի խոսքերով, անհրաժեշտ է օդային շրջափակման ենթարկել Սիրիային, նրա երկինքը հայտարարելով թռիչքազերծ գոտի: «Եթե հարկ լինի, մենք պատրաստ ենք անել այն, ինչ արվեց Լիբիայում», հայտարարել է նա, միաժամանակ ավելացնելով, որ դրա համար կպահանջվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թույլտվությունը:

Եվրոպայում ամերիկացի առավել բարձրաստիճան զորապետը իր հայտարարությունն արել է արդեն այն բանից հետո, երբ հայտնի դարձավ Սիրիայում քիմիական զենքի կիրառման մասին: Նախագահ Բաշար Ասադի կողմնակիցները եւ հակառակորդները միմյանց մեղադրում են Հալեպի մոտակայքում քիմիական թունավոր գազ օգտագործելու մեջ: Մեղավորը դեռ վերջնականապես հայտնի չէ, սակայն ԱՄԿ-ի գլխավոր քարտուղարը տվյալ արարքն անվանել է «հրեշավոր հանցագործություն»: Երեկ «**Ազգը**» գրեց 31 զոհերի եւ 100-ից ավելի տուժածների մասին: Սպիտակ տան մամլո քարտուղար Ջեյմս Քարնին հայտարարել է, թե չկան ապստամբների կողմից քիմիական զենքի օգտագործման ստույգ վկայություններ, մինչդեռ Մոսկվան ապստամբներին խստիվ դատապարտել է նման զենք կիրառելու համար:

# Դիարբեքիրն անհամբեր սպասում էր Օջալանի հայտարարությանը

*1-ին էջից*

Տեքստի քրդական տարբերակն ընթերցել է Փերվին Բուլդանը, իսկ թուրքերենը՝ Սըրրը Սուրեյա Օնդերը, երկուսն էլ՝ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավորներ:

Ահա թե ինչ է ասել Օջալանը. «Նովրուզի առթիվ ողջունում եմ բռնադատվածներին: Իմ ընդվզումն ուղղված էր տգիտության, ստրկության եւ հուսահատության դեմ, այլ ոչ թե էթնիկ խմբավորման կամ որեւէ կրոնի: Այսօր սկզբնավորվում է նոր գործընթաց: Մենք անձնազոհության ենք գնացել հանուն մեր ժողովրդի, շնորհիվ դրա քրդերը կարողացան վերահաստատել իրենց ինքնությունը:

Փորձ արվեց, որ արաբները, պարսիկները, թուրքերն ու քրդերը անխնա մորթեն իրար: Ո՛չ ենք ասում պատերազմին եւ այդ կարգի կեղտոտ խաղերին: Թո՛ղ առաջին պլան դուրս գա ոչ թե զենքը, այլ՝ քաղաքականությունը: Սկսվում է ժողովուրդների դեմոկրատացման, ազատության եւ իրավահավասարության շրջանը: Այլեւս զենքը թող լռի: Թուրք եւ քուրդ ժողովուրդները թող հեռու մնան արյունահեղությունից: Վայր դրե՛ք ձեր զենքը եւ հեռացե՛ք երկրի սահմաններից: Զինված պայքարից անցնում ենք քաղաքական պայքարի: Ժամանակի հրամայականը պատերազմը կամ կռիվները չեն, այլ դաշինքն է ու միմյանց հետ գրկախառնվելը: Այս կոչը պայքարից հրաժարվել չի նշանակում, պարզապես սկիզբն է դնում նոր պայքարի»:

Օջալանի Դիարբեքիրում ընթերցված հայտարարությունը լայն արձագանք է գտել ինչպես Թուրքիայում, այնպես էլ աշխարհում: Թուրքիայի ազգային մեծ ժողովը դրան արձագանքել է բուռն հակազդեցությամբ, մասնավորապես նշելով, որ հրապարակում հնչել է միայն PKK-ի հիմնը եւ չի բարձրացվել գեթ մեկ թուրքական դրոշ:

Աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցներից «Գարդիանը» Օջալանի խոսքերին անդրադարձել է. «Օջալանը զինադադար հայտարարեց», «Ռոյթերը»՝ «Օջալանը երկրից դուրս գալու կոչ արեց», ֆրանսիական AFP՝ «Քրդերի հետ հաշտությունը Էրդողանին կդարձնի Թուրքիայի Լինկոլնը», «Ալ Ջազիրան»՝ «PKK ի առաջնորդի զինադադարի կոչը», «Շպիգելը»՝ «Օջալանը «հրաժեշտ զենքին» ասաց», «Ուոլ սթրիթ ջորնըլը»՝ «Հակամարտության կարգավորման եզրափակիչ փուլ» վերնագրերով:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 21.3.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: